

Սիրելի հարեճակիցներ, շնորհավորում ենք բոլորիդ՝
Ամանորը, Հիսուս Քրիստոսի սուրբ Ծննդյան և
Սկրտության բարեբաստիկ տոները, ցանկանում ենք
2003 թվականը լինի հաջողությունների և նոր
ծեռքերունների տարի թե՛ անձնական և թե՛ ազգային
բնագավառներում:

«ԼՈՒՅՍ»- ԽՄԲԱԳՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դեսպանության ամանորյան Շնորհավորանքը
Իրանի Իսլամական Հանրապետությունում
Հայաստանի Հանրապետության դեսպանության
դիվանագիտական անձնակազմի և անձամբ իմ
անունից շնորհավորում են իրանահայությանը զալիք
Ամանորի և Սուրբ Ծնունդի առիթով:
Անցնող տարին երկու հարեճան և բարեկամ
պետությունների հարաբերություններում եղավ նոր
ծեռքերունների, քաղաքական, տնտեսական,
մշակութային կապերի զարգացման տարի:
Այն նաև հորեյանական էր: Դեկտեմբերին լրացավ
Թեհրանում ՀՀ դեսպանության 10-րդ տարեդարձը:
Հորեյանական է նաև 2003 թվականը: Լրանում է
Սուրբ Էջմիածին մայր տաճարի 1700 ամյակը:
Թող 2003 թվականը իր հետ բերի արելատություն,
խաղաղություն, երջանկություն, նորանոր
հաջողություններ և առաջ քայլելու
հաստատականություն: Շնորհավոր Նոր տարի և
Սուրբ Ծնունդ:

ԳԵՂԱՍ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

Իսլ. խորհրդարանում Իրանահայ Ձույզ

**Պատգամավորների Շնորհավորանքը Տարեմուտի
Առիթով**

Սրտագին բարեմաղթանքներով իրանահայ
համայնքին և համայն հայ ժողովրդին շնորհավորում
ենք տարեմուտը և Հիսուս Քրիստոսի Ս. Ծնունդն ու
Սկրտությունը:

Թող Նոր Տարին լինի մեր ժողովրդի զավակների
իղծերի իրականացման, մեր համայնքի
հասարակական, հոգեւոր և մշակութային կյանքի
վերելքի, սիրելի Իրանի օրավուր բարգաւաճման և
միջազգային բեմերում նրա առավել հզոր
ներկայություն լինելու տարի:

Իսլ. խորհրդարանում հյուսիսային և հարավային
իրանահայության պատգամավորներ
դրկտ. Լեւոն Դավթյան և Ժորժիկ Աբրահամյան



**Դեկտեմբերը Հայ ժողովրդի
պատմության մեջ**

1 դեկտեմբեր

1824 Թիֆլիսում բացվեց Ներսիսյան դպրոցը
(շարունակեց գործել մինչև 1924թ.):

1827 Շուշիի հայկական տպարանի հիմնադրումը:

1920 Ադրբեջանի հեղափոխական խորհուրդը
հայտարարեց, որ ճանաչում է Լեռնային Ղարաբաղը,
Ջանգեզուրը, Նախիջևանը որպես Հայաստանի
բաղկացուցիչ մասեր:

1923 Երևանում բացվում է Հայաստանի պետական
կոնսերվատորիան:

1989 Հայաստանի և Արցախի խորհուրդների միացյալ
նստաշրջանի ժամանակ ընդունվեց Արցախի և
Հայաստանի վերամիավորումը: Սա հետևեց

Ադրբեջանի կազմից դուրս գալու շարժման Արցախի
օրենսդրական մարմնի ընդունմանը:

2 դեկտեմբեր

1920 Դաշնակցական կառավարության
պատվիրակությունը Ալեքսանդրապոլում թուրքական
զավթիչների հետ կնքում է Հայաստանը
անդամահատող և ստրկացնող պայմանագիր:

1920 Հայաստանի Հանրապետության
խորհրդայնացումը:

6 դեկտեմբեր

1920 ՀԽՍՀ Հեղկոմի որոշումով հանրապետության
սահմաններում պետական լեզուն ճանաչվում է
հայերենը:

1921 Հռոմում Արշավիր Շիրակյանը տապալեց թուրք
վարչապետ Սայիդ Հալիմ փաշային:

7 դեկտեմբեր

1988 Հայաստանում տեղի ունեցավ կործանարար
երկրաշարժ, որի հետևանքով մի քանի վայրկյանների
ընթացքում (11:41) զոհվեց մոտավորապես 30000
մարդ:

8 դեկտեմբեր

1496 Ծովեց բնագետ-բժիշկ, գիտնական, մատենագիր
Ամիրդովլաթ Ամասիացին:

9 դեկտեմբեր

1970 Վախճանվեց հայ ավիոկոնստրուկտոր Արտեմ
Միկոյանը: (Ծնվ. 1905թ.-ին):

10 դեկտեմբեր

1991 Արցախն անցկացրեց անկախության հանրաքվե
օտարերկրյա դիտորդների ներկայությամբ և այդ
ժամանակվա գործող խորհրդային օրենքների
համաձայն, ընտրության մասնակցողների 82%-ը (ըստ
հունվարի 1989 թ վերջի մարդահամարի) քվեարկեց
99.7% կողմ, Ադրբեջանից դուրս գալու համար՝
համաձայն 1990 04 03-ի խորհրդային օրենքի, որն
այդ ժամանակ ուժի մեջ էր և միջազգային ճանաչում
ունեն: Արդյունքում Արցախը 1992թ. հունվարի 6-ին
հանրապետության Գերագույն խորհրդի կողմից
հռչակվեց անկախ պետություն:

13 դեկտեմբեր

1854 Շուշիում ծնվեց Սուրբաբանը (Գրիգոր Տեր-
Հովհաննիսյան): (Վախճ. 1908թ.-ին):

1901 Բացվեց Ալեքսանդրապոլ-Երևան
երկաթուղագիծը:

1911 Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ V-ը
(Սուրենյանցը): (Սպանվեց խորհրդային
ոստիկանության կողմից 1930թ.-ին):

1921 Սկսվում է արտասահմանից հայերի
հայրենադարձությունը խորհրդային Հայաստան:

14 դեկտեմբեր

1861 Կ. Պոլսում հիմնվում է Արևելյան թատրոնը:
Բացման առթիվ ճառ է ասում Միք. Նալբանդյանը:

1922 Ծնվեց վաստակավոր երգչուհի Գոհար
Գասպարյանը Կահիրեում:

16 դեկտեմբեր

1912 Հովհաննես Թումանյանի նախագահությամբ
Թիֆլիսում կազմակերպվեց հայ գրողների
Կովկասյան ընկերությունը:

19 դեկտեմբեր

1892 Թբիլիսիում վախճանվեց հրապարակախոս,
«Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին: (Ծնվ. 1845թ.-
ին, Մոսկվայում):

22 դեկտեմբեր

1993 Ադրբեջանի բանակը հարձակումներ սկսեց
Արցախի հետ իր սահմանի ամբողջ երկայնքով: Բոլոր
Դեկտեմբեր, 2002թ. էջ 1

հարձակումներն էլ ետ մղվեցին հարձակողների համար մեծ ավերածություններով և կորուստներով: Հարձակումն ձախողվեց 1994-ի մայիսին:

23 դեկտեմբեր

1952 Մահացավ Արամ Անտոնյանը: (Ծնվ. 1875 թ.):

1994 ԼՂՀ Գերագույն Խորհրդի կողմից Ռոբերտ Քոչարյանն ընտրվեց անկախ Արցախի առաջին նախագահ:

24 դեկտեմբեր

1908 Ծնվեց հայ լուսանկարիչ Յուսուֆ Կարշը: Վախճանվեց 2002թ.

25 դեկտեմբեր

1920 Կազմվում է այսպես կոչված «Ինքնավար Սյունիքի կառավարություն» (1921 թվականի ապրիլի 26-ին այն վերակազմվում է և անվանվում «Լեռնահայաստանի կառավարություն»):

1991 Խորհրդային Միությունը քայքայվեց: Միխայիլ Գորբաչովը տվեց իր հրաժարականը:

27 դեկտեմբեր

1346 Ծնվեց հայ փիլիսոփա, հասարակական-եկեղեցական գործիչ Գրիգոր Տաթևացին: (Վախճ. 1409թ.-ին):

1849 Կ. Պոլսում ծնվեց մեծահամբավ դերասան Պետրոս Աղամյանը: (Վախճ. 1891 թ.-ին):

29 դեկտեմբեր

1865 Ծնվեց հայ նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: (Վախճ. 1941թ.-ին):

31 դեկտեմբեր

1979 Գործարկվեց Հայաստանի ատոմակայանի երկրորդ էներգաբլոկը:

1979 Տեղի ունեցավ Արփա-Սևան գետնուղու վերջին երկու հատվածների միակցումը:

Լուրեր

Իրանահայ համայնք

- **Տ. Պարգեի Արք. Մարտիրոսեանը՝ Թեհրանում**

Ընդառաջելով Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպիսկ.

Սարգսյանի հրաւերին հինգշաբթի, դեկտ. 19-ին Թեհրան ժամանեց Ս. Էջմիածնի միաբան Տ. Պարգեի արք. Մարտիրոսյանը: Հոգեւոր առաջնորդին

օղանավակայանում դիմավորեցին Ս. Սեպուհ եպիսկ. Սարգսյանը,

Թեմական խորհրդի առաջին ատենադպիր Եսայի Աբրահամյանը եւ Ս. Վարազդատ ավ. քին. Տէրտերյանը:

Երեկոյան Տ. Պարգեի արք. Մարտիրոսյանին բարի գալուստ մաղթելու համար Թեհրանի ազգային առաջնորդարանի դահլիճում ի մի էին եկել Իրանում ՀՀ լիազոր դեսպանը եւ դեսպանատան բարձրաստիճան պաշտոնատարներ, Իսլ. խորհրդարանում հյուսիսային իրանահայության պատգամավորը, թեմիս ազգային եւ կրոնական մարմինների ներկայացուցիչներ:

Նոյն օրը երեկոյան Պարգեի Սրբազանը այցելել է Հ. Ս. «Արարատ» Կ-ի Նոբահարի կենտրոնատեղի, ուր եւ



հանդիպել է համայնքի մի շարք անդամների հետ: Ս. Սարգիս եկեղեցում ս. պատարագը մատուցելուց յետոյ, կարճատեւ այցելութեամբ Պարգեի Սրբազանը ներկա է գտնվել «Արարատ» մարզավանում:

- **Տ. ՊԱՐԳԵԻ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ. «Միշտ Հիշեք Մեզ Ձեր Աղոթքներում, Մենք Դրան Հավատում ենք....»**

Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպիսկ. Սարգսյանի հրավերով Թեհրան այցելած Ս. Էջմիածնի միաբան Տ. Պարգեի արք. Մարտիրոսյանը,

20 դեկտեմբերի առավոտյան ժամը 10-ին Թեհրանի Ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցում պատարագեց եւ քարոզեց հոծ թվով բազմության համար:

Քարոզից առաջ թեմակալ առաջնորդը ներկայացրեց Ս. Պարգեի արք. Մարտիրոսյանի

կենսագրությունն ու գործունեությունը, որում նշեց. «1988-ին երջանկահիշատակ Ս. Տ. Վազգեն կաթողիկոսի հատուկ տնօրինումով նշանակվում է Արցախի թեմի առաջնորդ ու այդ օրից սկսած՝ որպես քաջակորով ու հավատքի տեր անձնավորություն՝ իր ծառայությունը բերեց, բերում է եւ վստահաբար դեռ երկարորեն բերելու է Արցախի մեր ժողովրդին:



կենսագրությունն ու գործունեությունը, որում նշեց. «1988-ին երջանկահիշատակ Ս. Տ. Վազգեն կաթողիկոսի հատուկ տնօրինումով նշանակվում է Արցախի թեմի առաջնորդ ու այդ օրից սկսած՝ որպես քաջակորով ու հավատքի տեր անձնավորություն՝ իր ծառայությունը բերեց, բերում է եւ վստահաբար դեռ երկարորեն բերելու է Արցախի մեր ժողովրդին:

Սրբազան Հօր խոսքի ավարտին հրավիրվեց խոսելու Պարգեի արք. Մարտիրոսյանը, որը իր խոսքում ասաց. «Նախ թույլ տվեք իմ ուրախ զգացումս եւ երախտագիտությունս հայտնել սիրելի հոգեւոր եղբորս՝ Գերաշնորհ Սեպուհի Սրբազանին, որի հրավերով, ազգային մարմնի հրավերով եւ Իրանի իշխանության արտոնությամբ հնարավոր եղավ, որ ես այցելեմ ձեզ, այս փառավոր ու պատմական, այս հոգեւոր թեմը եւ այս սքանչելի հայությանը տեսնել, որը միշտ հռչակվել է որպես ամուր հավատքից կառչած իրանահայություն, որով մենք միշտ հիացել ենք, որ անսասան է եւ այդ ձեւով միշտ կարողացել ենք մեր հավատքը պահել եւ դարերի միջով անցկացնել եւ բերել մինչեւ այժմ:

Պարգեի Սրբազանը մեր եկեղեցականության այն բացառիկ անձնավորություններից է, որ ամեն բանից առաջ հավատքի մարդ է»:

Սրբազան Հօր խոսքի ավարտին հրավիրվեց խոսելու Պարգեի արք. Մարտիրոսյանը, որը իր խոսքում ասաց. «Նախ թույլ տվեք իմ ուրախ զգացումս եւ երախտագիտությունս հայտնել սիրելի հոգեւոր եղբորս՝ Գերաշնորհ Սեպուհի Սրբազանին, որի հրավերով, ազգային մարմնի հրավերով եւ Իրանի իշխանության արտոնությամբ հնարավոր եղավ, որ ես այցելեմ ձեզ, այս փառավոր ու պատմական, այս հոգեւոր թեմը եւ այս սքանչելի հայությանը տեսնել, որը միշտ հռչակվել է որպես ամուր հավատքից կառչած իրանահայություն, որով մենք միշտ հիացել ենք, որ անսասան է եւ այդ ձեւով միշտ կարողացել ենք մեր հավատքը պահել եւ դարերի միջով անցկացնել եւ բերել մինչեւ այժմ:



Պարգեի Սրբազանը մեր եկեղեցականության այն բացառիկ անձնավորություններից է, որ ամեն բանից առաջ հավատքի մարդ է»:

Սրբազան Հօր խոսքի ավարտին հրավիրվեց խոսելու Պարգեի արք. Մարտիրոսյանը, որը իր խոսքում ասաց. «Նախ թույլ տվեք իմ ուրախ զգացումս եւ երախտագիտությունս հայտնել սիրելի հոգեւոր եղբորս՝ Գերաշնորհ Սեպուհի Սրբազանին, որի հրավերով, ազգային մարմնի հրավերով եւ Իրանի իշխանության արտոնությամբ հնարավոր եղավ, որ ես այցելեմ ձեզ, այս փառավոր ու պատմական, այս հոգեւոր թեմը եւ այս սքանչելի հայությանը տեսնել, որը միշտ հռչակվել է որպես ամուր հավատքից կառչած իրանահայություն, որով մենք միշտ հիացել ենք, որ անսասան է եւ այդ ձեւով միշտ կարողացել ենք մեր հավատքը պահել եւ դարերի միջով անցկացնել եւ բերել մինչեւ այժմ:

Պարգեի Սրբազանը մեր եկեղեցականության այն բացառիկ անձնավորություններից է, որ ամեն բանից առաջ հավատքի մարդ է»:

Սրբազան Հօր խոսքի ավարտին հրավիրվեց խոսելու Պարգեի արք. Մարտիրոսյանը, որը իր խոսքում ասաց. «Նախ թույլ տվեք իմ ուրախ զգացումս եւ երախտագիտությունս հայտնել սիրելի հոգեւոր եղբորս՝ Գերաշնորհ Սեպուհի Սրբազանին, որի հրավերով, ազգային մարմնի հրավերով եւ Իրանի իշխանության արտոնությամբ հնարավոր եղավ, որ ես այցելեմ ձեզ, այս փառավոր ու պատմական, այս հոգեւոր թեմը եւ այս սքանչելի հայությանը տեսնել, որը միշտ հռչակվել է որպես ամուր հավատքից կառչած իրանահայություն, որով մենք միշտ հիացել ենք, որ անսասան է եւ այդ ձեւով միշտ կարողացել ենք մեր հավատքը պահել եւ դարերի միջով անցկացնել եւ բերել մինչեւ այժմ:

Պարգեի Սրբազանը մեր եկեղեցականության այն բացառիկ անձնավորություններից է, որ ամեն բանից առաջ հավատքի մարդ է»:

Սրբազան Հօր խոսքի ավարտին հրավիրվեց խոսելու Պարգեի արք. Մարտիրոսյանը, որը իր խոսքում ասաց. «Նախ թույլ տվեք իմ ուրախ զգացումս եւ երախտագիտությունս հայտնել սիրելի հոգեւոր եղբորս՝ Գերաշնորհ Սեպուհի Սրբազանին, որի հրավերով, ազգային մարմնի հրավերով եւ Իրանի իշխանության արտոնությամբ հնարավոր եղավ, որ ես այցելեմ ձեզ, այս փառավոր ու պատմական, այս հոգեւոր թեմը եւ այս սքանչելի հայությանը տեսնել, որը միշտ հռչակվել է որպես ամուր հավատքից կառչած իրանահայություն, որով մենք միշտ հիացել ենք, որ անսասան է եւ այդ ձեւով միշտ կարողացել ենք մեր հավատքը պահել եւ դարերի միջով անցկացնել եւ բերել մինչեւ այժմ:

Պարգեի Սրբազանը մեր եկեղեցականության այն բացառիկ անձնավորություններից է, որ ամեն բանից առաջ հավատքի մարդ է»:

Սրբազան Հօր խոսքի ավարտին հրավիրվեց խոսելու Պարգեի արք. Մարտիրոսյանը, որը իր խոսքում ասաց. «Նախ թույլ տվեք իմ ուրախ զգացումս եւ երախտագիտությունս հայտնել սիրելի հոգեւոր եղբորս՝ Գերաշնորհ Սեպուհի Սրբազանին, որի հրավերով, ազգային մարմնի հրավերով եւ Իրանի իշխանության արտոնությամբ հնարավոր եղավ, որ ես այցելեմ ձեզ, այս փառավոր ու պատմական, այս հոգեւոր թեմը եւ այս սքանչելի հայությանը տեսնել, որը միշտ հռչակվել է որպես ամուր հավատքից կառչած իրանահայություն, որով մենք միշտ հիացել ենք, որ անսասան է եւ այդ ձեւով միշտ կարողացել ենք մեր հավատքը պահել եւ դարերի միջով անցկացնել եւ բերել մինչեւ այժմ:

Մենք Արցախում 1988 թվականից փորձեցինք արագ-արագ վերականգնել մեր հավատքը, մեր եկեղեցիները եւ մեր սրբավայրերը, ամեն տեղ տեղադրելով սուրբ խաչը: Բայց եկավ 1992 թականը. Արցախի պատմական Շուշի մայրաքաղաքից կրակ եւ ռումբեր էին թափվում Ստեփանակերտ քաղաքի վրա: Մեր դրացիները ամեն օր գնդակոծում էին Ստեփանակերտը եւ ահա որոշում կայացվեց, որ մենք պարտավոր ենք մեր կյանքը ապահովելու համար, մեր անվտանգությունը ամրացնելու համար, ազատագրել մեր նախկին պատմական Շուշի մայրաքաղաքը, քանզի այն լեռան գագաթին էր գտնվում, իսկ մենք ապրում էինք ներքեւում Ստեփանակերտում: Ամեն օր ծրագրում էինք, որ այսօր, վաղը պիտի գնանք եւ ազատագրենք:

Եւ ամեն անգամ մի բան խանգարում էր, ամեն անգամ մի բան մեզ հետ էր մղում: Եւ եկավ մայիսի 7-ը, հավաքվեցին բոլոր մեր հրամանատարները, բոլորին օրհնեցինք, աղոթք արեցինք, մաղթեցինք, որ իրենք մնան ողջ եւ կատարեն հայրենիքի հանդեպ իրենց պարտականությունը՝ հույս տալով նրանց, որ իհարկէ, հաղթանակը մերը կը լինի, քանզի մենք յանուն արդարության, հանուն հավատի, հանուն կեանքի, հանուն խաղաղության ենք այս ամենը անում:

Եւ այդ օրը՝ մայիսի 7-ի առավոտյան մենք ունեինք ընդամենը 2325 զինուոր, բոլորը եկել էին եկեղեցի եւ խաչ էին փնտրում: Որպեսզի մենք ջանամք ամեն մեկին խաչ տալ, որպեսզի ամեն մի հայ զինվոր իրեն ապահով զգա՝ խաչ ունենալով իր կրծքի վրա (եւ որ չհերիքեցին մեր խաչերը), մենք պատիկ խաչի նշաններ տվեցինք, որպեսզի նրանք ամրացնեն իրենց սրտի վրա: Եւ երբ որ դա էլ չհերիքեց, մեր զինվորները խաչի նշանով ներկեցին իրենց կուրծքը, թեւերը, կռնակը, իրենց զենքերը եւ բոլոր մեքենաները: Չարմանալի բան էր կատարում. բոլորը խաչերով էին գնում մարտի դաշտ այդ օրը:

Ինչո՞ւ: Անցավ մի քանի տարի: Արդեն ազատագրւած Շուշիում աղոթք էի անում ու խորհում էի, ասում էի՝ Տեր Աստված, ինչո՞ւ հենց մայիսի 7-ին մենք գնացինք ազատագրելու Շուշին: Ինչո՞ւ մայիսի 1-ին չէ, ինչո՞ւ Ապրիլ 24-ին չէ եւ այլն եւ այլն: Եւ ինչո՞ւ այդ օրը բոլոր մեր հայ զինվորները խաչ էին ուզում, ինչո՞ւ բոլորը խաչի նշանով գնացին մարտի դաշտ: Չէ՞ որ մենք չէինք ստիպում, իրենք էին խնդրում:

Եւ աղոթքից հետո, ինձ մօտ գիրք կար, որը հրատարակել էր այս թեմի նախկին Գերաշնորհ լուսահոգի Արտակ Սրբազանը՝ «Հայ եկեղեցու տօներ»: Այդ գիրքը բացեցի հենց էսպես պատահական եւ բացվեց մի գեղեցիկ էջ, որը կոչվում

էր խաչի երեւման տոն: Եւ այդ խաչի երեւման օրը տեղի է ունեցել մայիսի 7-ին»:

Նա իր խոսքի շարունակության մեջ նշեց. «Եւ ես էլ այսօր Արցախից եկած հոգեւորական, ձեզ հետ միասին սիրելի հայրենակիցներ, մեր թարմ աղոթքն անենք բերելով ձեզ Ամենայն հայոց կաթողիկոսի օրհնությունը եւ նրա բարի մաղթանքները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, մեր Արցախի ժողովրդի եւ մեր իշխանության ջերմագին ողջույնները եւ սրտագին մաղթանքները, որպեսզի դուք միշտ լինեք ամուր, ամուր ձեր հավատքի մեջ, ձեր պարտականության մեջ, որպես քաղաքացի այս երկրի վրա, որը հյուրընկալեց եւ խաղաղ երկինք տվեց հայոց բեկորներին, որոնք այստեղ ծվարել են եւ իրենց կյանքն են շարունակում արդեն 400 տարիներից ի վեր: Սիրելի Սրբազան Հայր, սիրելի հայրենակիցներ, մենք մեկ բանի կարոտ ունենք մեր հայրենի ազատագրված Արցախում. ձեր զորավոր աղոթքներին:

Միշտ հիշեք մեզ ձեր աղոթքներում, մենք դրան հավատում ենք եւ կարոտ ենք եւ սպասում ենք ձեր ամենօրյա փոքրիկ աղոթքներին: Երբ որ մեկս մյուսի համար աղոթում ենք, դառնում ենք մեկ, քանզի իսկապես մեկ ենք՝ արյամբ, ծնունդով, հավատքով եւ շրջապատված մեր հայրենիքի եւ մեր եկեղեցու շուրջ: Եւ կարոտ ենք ավելի ու ավելի մեկ լինելու, որպեսզի դառնանք ավելի ամուր, որպես բյուրեղ, որպես աղամանդ: Մեկս մյուսին հույս ներարկելով, մեկս մյուսին զորավիզ լինելով, մեկս մյուսին մխիթարելով, սիրելով:

Ուստի՝ սիրելի հայրենակիցներ, միշտ կրեք այս գեղեցիկ եւ ամենագորեղ զենքը՝ ձեր սրտերում եւ ձեր կրծքի վրա միշտ խաչակնքեք, միշտ ձեր երեխաներին խաչակնքեք, որ միշտ լինեն նրանք սուրբ խաչի հովանու տակ: Սրանից ավելի զորեղ զենք չունենք, քանզի սա խորհրդանուն է բուն Հիսուս Քրիստոսին, Աստծուն:

Իսկ ի՞նչ կարող է լինել անելի վեր, ավելի զորեղ, ավելի գեղեցիկ, ավելի վստահելի, ավելի հուսալի, քան Աստված: Եւ թող Հիսուս Քրիստոսի աջը եւ սուրբ խաչը Հավետ լինեն ձեզ հետ, ամեն մի հայի հետ, այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից ամեն»:

Հատկանշական է, որ Պարզեւ Սրբազանը Թեիբանում իր կեցութեան ընթացքում այցելել է մի քանի եկեղեցիներ եւ «Արարատ» մարզավան:

• **Արթուր եւ Հրաչուհի Ութնազյանները Իրանում**

Երեւանի դրամատիկական թատրոնի Իրանում վերջերս կայացած հյուրախաղերի շրջանակներում մշակութային «Արարատ» կազմակերպության «Կոմիտաս» սրահում կայացավ նաեւ Արթուր եւ Հրաչուհի Ութնազյանների հեղինակած «Պոեզիայի երեկոն»: 400 հանդիսատես տեղավորող սրահում իրանահայերը հիացմունքով ունկնդրեցին մեզանում հեղինակություն վայելող արտիստի եւ նրա դստեր կատարումները: Եղիշե Չարենց, Պարույր Սեւակ, Համո Սահյան, Վահագն Դավթյան, Սիլվա Կապուտիկյան... ահա հեղինակների ոչ լրիվ ցանկը, որոնց ստեղծագործությունները ներկայացվեցին իրանահայ ունկնդրին:

Մի քանի ամիս առաջ Երեւանում, դրամատիկական թատրոնում Արթուր Ութնազյանը Հրաչուհու հետ արդեն մեկ ներկայացում տվել էր, նորից պոեզիայի



երկու: Ներկայացումը մեծ հաջողություն ունեցավ: Հնարավոր էր, որ ներկայացումը ամբողջությամբ տարվեր Իրան:

- Ոչև ասում է Արթուր Ութնազյանը: - Այնտեղ ուրիշ միջավայր էր, ուրիշ պայմաններ էին: Ճիշտ է, մեր հանդիսատեսը հայեր էին, սակայն օտար երկրում ապրող, օտար երկրի ու սովորույթների հետեւորդ հայեր: Ուստի պետք էր առանձնակի ընտրություն կատարվեր:

Մեր տրամադրության տակ են Իրանի պարսկալեզու եւ հայ մանուկում տպագրված հոդվածներ, բեմադրության թատերագրություններ: Բոլորն էլ բարձր են գնահատում հայր եւ դուստր Ութնազյանների բեմադրությունը:

- Մեր հարեւան այս երկիրը, որի մասին, թվում է, շատ բան գիտեիք, իսկապես անչափ հետաքրքրական ու անծանոթ էր մեզ. շարունակում է Արթուր Ութնազյանը: - Մեզ զարմացրեց իրանահայերի պոեզիայի նկատմամբ ունեցած խստապահանջությունը եւ բարձր ճաշակը: Այնտեղ, ինչպես եւ ամենուր, հնարավոր չէ հենց այնպես ելույթ ունենալ, հենց այնպես գիրք կամ նկար ներկայացնել: Իհարկե, մենք՝ դափնյանացիներս, սովորել ենք ոչ մի դեպքում եւ ոչ մի տեղ «հենց այնպես» բեմ չէլնել: Դա էր գուցե պատճառը, որ իմ ու Հրաչուհու ելույթը հաջողվեց:

Պրոֆեսիոնալ արտիստը, եթե անգամ ցանկություն էլ ունենա, չի կարող բեմ չէլնել իմիջիայլոց, կեղծիքի չի կարող դիմել: Արթուր Ութնազյանի պարագայում սա հաստատված է: Այժմ հոր եւ տատիկի ճանապարհով է քայլում դուստրը՝ Հրաչուհի Ութնազյանը:

Իրան

- **Մշակույթի եւ Իսլ. առաջնորդության Նախարարի Ծնորհավորանքը Ամանորի եւ Ս. Ծնունդի առիթով**

Իրանի Մշակույթի եւ Իսլ. առաջնորդության Նախարար Ահմադ Մասջեդ Ջամեհին Նոր տարվա եւ Ս. Ծնունդյան տոների առթիվ Իրանի քրիստոնյաներին շնորհավորական պատգամ է հղել: Ըստ սույն նախարարության հանրային կապի գրասենեակի՝ նախարարն իր պատգամում խաղաղության ու արդարության տարածումն ու կայունացումը մաղթելով՝ հույս է հայտնել, որ փրկչական նոր տարին բոլոր աստվածային կրոնների հետեւորդների, հատկապես մուսուլմանների ու քրիստոնյաների, հաշտ ու համերաշխ համակեցության վկան լինի:

- **«Համբարսեզի» Օրաթերթը՝ Ատոմ Էգոյանի «Արարատ» Ֆիլմի Մասին**

Թեհրանի «Համբարսեզի» օրաթերթը իր դեկտեմբերի 24-ի համարի մշակույթ եւ արվեստ էջում (12-րդ) մի կարճ հարցազրույց է տպագրել կանադահայ բեմադրիչ Ատոմ Էգոյանի հետ «Արարատ» ֆիլմի մասին «Մի արհավիրք ցեղասպանություն անվամբ» վերնագրով:

- **Իրանը պաշտպանում է երկկողմ խնդիրների կարգավորման շուրջ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ քաղաքական երկխոսությունը**

ԹԵՀՐԱՆ, 30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանի արտգործնախարար Քամալ Խարազին կարեւորել է

կովկասյան եւ կասպիական տարածաշրջանի երկրների միջեւ խաղաղությունը, տարածաշրջանային անվտանգությունն ու սերտ համագործակցությունն ամրապնդելու անհրաժեշտությունը: Ադրբեջանի կառավարության փոխնախագահ Ալի Հասանովի հետ կայացած հանդիպմանը նա ընդգծել է, որ «Իրանը կպաշտպանի Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ քաղաքական երկխոսությունը եւ կողջունի այդ երկու երկրների ղեկավարների փոխադարձ այցելությունները»:

«Մենք հուսով ենք, որ երկու երկրների միջեւ ճգնաժամը շուտով կկարգավորվի», -ավելացրել է Իրանի արտգործնախարարը: Ալի Հասանովը այստեղ էր գտնվում պաշտոնական այցով եւ Իրանի պաշտոնատար անձանց հետ բանակցություններ է անցկացրել տարբեր բնագավառներում, այդ թվում՝ տնտեսության, առեւտրի, տրանսպորտի ոլորտներում, երկկողմ կապերի հետագա զարգացման հարցերի շուրջ:

- **Ըստ Իրանի նավթի նախարարի, Իրաքին ԱՄՆ-ի հարվածը կբարդացնի համաշխարհային նավթաշուկայի իրավիճակը**

ԹԵՀՐԱՆ, 27 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրաքի վրա ամերիկացիների հնարավոր հարձակումը կբարդացնի համաշխարհային նավթաշուկայի իրավիճակը, որտեղ առանց այդ էլ խնդիրներ են ծագել Վենեսուելայի իրադարձությունների պատճառով: Ինչպես հայտարարել է Իրանի նավթի նախարար Բեժան Չանգանեն, նշված իրադարձություններն արդեն հանգեցրել են համաշխարհային շուկա օրական 3 մլն բառելով այդ հունքի մատակարարումների կրճատման, իսկ Իրաքին ԱՄՆ-ի հարվածի դեպքում շուկայում պակաս կստացվի եւս 2 մլն բառել:

Նախարարը նախազուլացրել է, որ եթե Վաշինգտոնին հաջողվի տապալել Սադամ Հուսեյնի վարչակարգը եւ հսկողություն հաստատել Իրաքի նկատմամբ, ապա լրացուցիչ շուկա կնետվի ավելի քան 5 մլն բառել նավթ: «Այդ դեպքում մենք ստիպված կլինենք մեծացնել մեր բաժնեչափն ՕՊԷԲ-ում», -ասել է նա: Ի դեպ, «անկախ Իրաքի շուրջ ստեղծված ճգնաժամից, մենք արդեն նախապատրաստվել ենք ավելացնել նավթի արտահանումը», -ավելացրել է Չանգանեն:

Այժմ իրանցիներն ընդունակ են օրական արտադրել մինչեւ 4 մլն բառել նավթ: ՕՊԷԲ-ի բաժնեչափի համաձայն, Իրանն իրավասու է արտահանել 3,4 մլն բառել:

- **Իրանը հավաստել է իր հավատարմությունը միջուկային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելուն**

ԹԵՀՐԱՆ, 26 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իրանը հաստատում է իր հավատարմությունը միջուկային էներգիան խաղաղ նպատակներով օգտագործելուն եւ մտադիր է այդ բնագավառում ստանալ օտարերկրյա տեխնոլոգիաներ, եթե դրա անհրաժեշտությունը լինի: Այդ մասին հայտարարել է Իրանի կառավարության պաշտոնական ներկայացուցիչ Աբդալլա Ռամեզանզադեն:

«Մենք խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործումը դիտում ենք որպես մեր օրինական իրավունքը», -նշել է նա: Իրանը եւ

Ռուսաստանը տարածայնություններ չունեն Բուշերում ատոմային էլեկտրակայանի կառուցումն ավարտելու ամենաշուրջը, ընդգծել է Իսլամական Հանրապետության կառավարության պաշտոնական ներկայացուցիչը:

• **Իրանը եւ Սիրիան դեմ են տարածաշրջանի ցանկացած երկրի դեմ ռազմական գործողությանը**

ԹԵՀՐԱՆ, 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊԵՏ: Իրանը եւ Սիրիան դեմ են տարածաշրջանի ցանկացած երկրի, այդ թվում Իրաքի դեմ ռազմական գործողությանը եւ այդ երկրի տարածքային ամբողջականության ու անկախության պահպանման կողմնակիցներ են: Այդ մասին հայտարարել է Սիրիայի վարչապետ Մուհամեդ Մուստաֆա Սիրոն պաշտոնական այցով Իրան ժամանելուց հետո: Նա ողջունել է Բաղդադի կողմից ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բանաձեւի ընդունումը եւ ՄԱԿ-ի տեսուչներին անհրաժեշտ օբյեկտներ այցելելու հնարավորությունը ընձեռելը:

«Միավորված ազգերի կազմակերպությունը Իրաքի վերաբերյալ ցանկացած որոշում պետք է ընդունի այդ բանաձեւում պարունակվող դրույթների կատարումից հետո», - հայտարարել է Սիրիայի կառավարության ղեկավարը: Մուստաֆա Սիրոն թեհրան է ժամանել՝ գլխավորելով քաղաքական ու տնտեսական պատվիրակությունը: Իսլամական Հանրապետությունում գտնվելու չորս օրվա ընթացքում Սիրիայի պատվիրակությունը, որի կազմում կան մի շարք նախարարներ, կքննարկի տարածաշրջանի եւ աշխարհի իրավիճակը, ամբուտրատնտեսական համագործակցության, տրանսպորտի, առողջապահության բնագավառում կապերի ամրապնդման հարցերը: Պատվիրակությանն ուղեկցում են սիրիացի մի մեծ խումբ գործարարներ:

Շայաստան

• **Հրանտ Մաթեոսյանն անմահացավ..**

Որքան էլ տարօրինակ, որքան էլ ցավալի, որքան էլ անողոր Է, բայց, ի վերջո, մահն է, որ սկիզբն է դառնում անմահության:

Դուռը դեպի **վերին աշխարհ**, ուր, հաստատապես, դրախտում է լինելու նրա տեղը:

ՄԵԾ էր ու մնաց ՄԵԾ:

ՏԵՐ էր ու ՏԵՐ մնաց:

ՀԱՆՃԱՐԵՂ էր: Եղավ ու մնաց այդպիսին:

Ու հիմա ՎԵՐԵՎՈՒՄ Է ՀԱՆՃԱՐԵՂ լինելու:

ՄԵԾ:

ՏԵՐ:

Նաեւ Էն աշխարհին ու ժողովրդին, որոնց եթե հիշելու էլ են, ապա՝ որպես ԻՐ աշխարհը ու ԻՐ ժողովուրդը:

Ու, եթե մի՛ֆ չէ հոգիների վերաբնակեցումը՝ երանի՛ նրան, ում մեջ վերաբնակվելու է ՀՐԱՆՏԻ հոգին...

Հրանտ Մաթեոսյան

Հայ ժողովուրդը, մասնավորապես հայ գրականությունը, ծանր կորուստ կրեցին. դեկտեմբերի 18-ի ուշ երեկոյան կյանքից հեռացավ ժամանակակից

ամենահայտնի հայ արձակագիր Հրանտ Մաթեոսյանը՝ ընդամենը 67 տարեկան հասկում: Մի քանի ամիս առաջ Մ. Նահանգներում ենթարկվել էր թոքի վիրահատության՝ անողոր հիվանդությունը հաղթահարելու հույս եւ վստահություններ չէլով հարազատներին



, ընկերներին եւ բազմահազար ընթերցողներին Հայաստանում թե սփյուռքում:

Կենդանությունն իսկ, եւ արդարորեն, «ապրող դասական» կոչմանն արժանացած գրողի կենսագրությունն սկսվում է 1935 թ. մարտի 3-ին Ահմիժոր գյուղում: Գյուղ, որը լինելու էր նրա ստեղծագործական ներշնչանքի, ազգի, հասարակության եւ պետականության շուրջ տվյալումքների ու մտահոգությունների աղբյուրը: Արդեն գրական ասպարեզ էր իջել «Ահմիժոր» ակնարկով, որը միանգամից տաղանդավոր գրողի վրա սեւեռեց գրաքննադատների ու ընթերցողների ուշադրությունը, հույսերը: Զուշացան նրա տաղանդի փայլատակումներն ամփոփող ստեղծագործությունները՝ «Օգոստոս», «Ծառերը», «Մեր վազքը» ժողովածուները, որոնցում ներկայացված «Մենք ենք, մեր սարերը», «Աշման արեւ», «Կայարան», «Գոմեշը», «Ալխո» եւ այլ վիպակներն ու պատմվածքները նրան մեծ ճանաչում ու փառք բերին: 1995-2000-ին Հրանտ Մաթեոսյանը եղավ Գրողների միության նախագահ, մի վարչական պաշտոն, որը ամենեւին հարազատ չէր նրա խառնվածքին, որով, սակայն, ապահովվեց այդ կազմակերպության մեկությունը:

Դասականները չեն մեռնում:

• **Ցավակցում է նախագահ Ռոբերտ Քոչարյանը**

Անվանի գրող Հրանտ Մաթեոսյանի մահվան կապակցությամբ, նախագահ Ռոբերտ Քոչարյանը ցավակցական հեռագիր է հղել Մաթեոսյանների ընտանիքին:

Հեռագրում ասված է.

«Խոր ցավով տեղեկացա մեծ գրողի՝ Հրանտ Մաթեոսյանի մահվան մասին: Մեր նոր գրականության մեծ երախտավորը կենդանության օրոք արդեն հասցրել էր գրական, եւ ոչ միայն գրական մի քանի սերնդի ուսուցիչ եւ դասական լինել: Մեր հասարակությունը միշտ զգացել էւ զգալու է նրա ծանրակշիռ եւ հեղինակավոր խոսքի կարիքը:

Իմ խորին ցավակցությունն են հայտնում Հրանտ Մաթեոսյանի հարազատներին, նրա անմահ ստեղծագործությունների ընթերցողներին»:

• **Գարեգին Բ կաթողիկոսի ցավակցական գիրը**

Խոր ցավով տեղեկացանք մեր ժողովրդի արժանավոր զավակ, մեծանուն գրող Յրանտ Մաթեոսյանի անժամանակ մահվան մասին:

Հանուն Ամենայն հայոց կաթողիկոսության, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության եւ Գերագույն հոգեւոր խորհրդի, ծանր կորստի այս պահին վշտացյալ մեր հոգու անկեղծ ցավակցություններն ենք բերում Մաթեոսյան սգակիր ընտանիքին, ննջեցյալի բոլոր հարազատներին եւ մեր ժողովրդի բարեպաշտ զավակներին:

Վաստակյալ մտավորական եւ հայրենասեր հայրորդի Յրանտ Մաթեոսյանը գրական իր վաստակով հավելեց փառքը մեր ժողովրդի՝ անթառամ հիշատակ թողնելով հայրորդաց հոգիներում:

Աղոթում ենք, որ Ամենողորմ Տերն Իր բարեգութեամբ երկմային լուսեղեն հարկերում հանգստություն պարգևի ննջեցյալի հոգուն եւ մխիթարության ու սփոփանքի բյուր շնորհներ ննջեցյալի այրուն, զավակներին ու մերձավորներին:

«Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի. ամէն»:

Վշտակից եւ աղոթարար՝ ԳԱՐԵԳԻՆ Բ, ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

• **Վշտակցություններ**

Մեր ժամանակի ականավոր գրող, ԽՍՀՄ եւ Հայաստանի պետական մրցանակների դափնեկիր, ՀԳՄ նախկին նախագահ, հանրահայտ արձակագիր, ռուս գրողների մեծ բարեկամ ՀՐԱՆՏ ԻԳՆԱՏԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ մահվան կապակցությամբ Գրողների միությունների միջազգային համագործակցության գործադիր կոմիտեն խորին ցավակցություն է հայտնում Հայաստանի կառավարությանը, Հայաստանի գրողների միությանը, ողջ հայ ժողովրդին, հարազատներին ու մտերիմներին:

Ժամանակակից գրականության մեծ վարպետի, հայրենասերի եւ ինտերնացիոնալիստի, մեր ընկերոջ եւ եղբոր բարի հիշատակը ընդմիշտ կնմա նրա գրչակիցների, ընթերցողների եւ հետեւորդների սրտերում:

Սերգեյ Սիխակյով, Արսենի Լարիոնով, Ռասուլ Հանգատով, Շավրաք Նիյազի, Ռինատ Մուհամադիեւ, Դավիդ Կուզուլտինով, Իսհակ Մաշբաշ, Խուտա Բերուլպա, Նուրլան Օրազալին, Ասկար Հաբիբ, Նադիրբեկ Ալիմբեկով, Աթամուրադ Աթաբաեւ, Հինգիզ Հուսեյնով, Գլան Օնանյան

Լուրը ցնցող է եւ ցավալի: Գրական աշխարհը կորցրել է ո՛չ միայն հիանալի արձակագրի: Կորսվել է այսօրվա մի շարք անկախ պետությունների գրողների միությունների երբեմնի հզոր ու միասնական կապի եւս մի օղակը:

«Լիտերատուրնայա գազետան» կորցրել է իր հին եւ հուսալի ընկերոջը:

Ավելի քան 40 տարի Յրանտ Մաթեոսյանն իր փայլուն գրչով անդադրում ծառայել է մեր ընդհանուր գրական գործին, մեր երկրների կապերի ամրապնդմանը: Նրա ստեղծագործությունները դարձել են ոչ միայն մերձավոր, այլեւ հեռավոր երկրների ժողովուրդների սեփականությունը: Եվ այժմ արդեն մշտապես մեզ հետ կլինեն նրա վիպակները, պատմվածքներն ու հանրահայտ ֆիլմերը:

«Լիտերատուրնայա գազետա»-ի կոլեկտիվը հայտնում է իր անկեղծ ցավակցությունները հանգուցյալի հարազատներին ու մտերիմներին, Հայաստանի գրողների միությանը, ողջ հայ ժողովրդին:

Թերթի կոլեկտիվի անունից գլխավոր խմբագիր Յուրի Պոյակով

Ալեքսան Կիրակոսյանի գերդաստանը խորը վշտով ցավակցում է մեծատաղանդ գրող Յրանտ Մաթեոսյանի անժամանակ մահվան առթիվ եւ իր կարեկցանքն է հայտնում մեր սիրելի ընկերոջ հարազատներին ու բարեկամներին:

Ալեքսան Կիրակոսյան

«Ես կորցրեցի իմ Հայաստանի ամենասիրելի, ամենաթանկարժեք մասը, անկրկնելի ու անփոխարինելի Յրանտ Մաթեոսյան համաշխարհային արժեքը»:

Հասմիկ Պապյան

Թանկագին բարեկամներ, խորապես ցնցված ենք Յրանտ Մաթեոսյան հայ մեծ գրողի եւ մեր ընկերոջ անժամանակ մահվան լուրից: Յրանտ Մաթեոսյանի ստեղծագործությունը պատկանում է ոչ միայն Հայաստանին, այլեւ բազմազգ Ռուսաստանին, որտեղ նա ուներ եւ կունենա հազարավոր նվիրյալ երկրպագուներ: Մենք հպարտ ենք, որ Մաթեոսյանը, մի քանի տասնամյակի ընթացքում, եղել է մեր ամսագրի մշտական հեղինակն ու խմբագրական խորհրդի անդամը: Մենք կանենք ամեն հնարավորը, որ նշանավոր այդ վարպետի գրքերը հասու լինեն հետագա սերունդներին: Խնդրում ենք մեր խորին ցավակցությունը հաղորդել գրողի ընտանիքին:

«Դուժբա նարոդով» ամսագրի խմբագրական խորհրդի անունից

Ա. Էրանոիժե, Լ. Տերակոսյան, Լ. Անիսկի, Ն. Իգորնովա, Լ. Բախնով, Տ. Սմեյանսկայա

Ցավակցական հեռագրերը շարունակում են ստացվել:

• **ՆԱԽԱԳԱՀԱՎԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Նոյեմբերի 21 ից մինչեւ ՀՀ նախագահի թեկնածուների առաջադրման ժամկետի ավարտը՝ դեկտեմբերի 6-ի ժամը 18.00-ն, ԿԸՀ ն պաշտոնապես ստացել է 21 հայտ 15 թեկնածուների առաջադրման վերաբերյալ:

Հայաստանի ժողովրդական կուսակցության նախագահ Ստեփան Դեմիրճյանի, «Ազգային միաբանություն» կուսակցության նախագահ Արտաշես Գեղամյանի, «Հանրապետություն» կուսակցության քաղաքական խորհրդի անդամ Արամ Սարգսյանի, Հայաստանի դեմոկրատական կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի, «Հայրենիք եւ պատիվ» կուսակցության փոխնախագահ Գառնիկ Մարգարյանի, «Ժողովրդավարական հայրենիք» կուսակցության նախագահ Պետրոս Մակեյանի, «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցության նախագահ Արշակ Սարգսյանի, «Միավորված հայեր» կուսակցության նախագահ Ռուբեն Ավագյանի, «Ազգային համաձայնություն» կուսակցության նախագահ Արամ Հարությունյանի, Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Վլադիմիր

Դարբինյանի, «Ազգային ինքնորոշում միավորման» նախագահ Պարույր Հայրիկյանի թեկնածություններն



առաջադրվել են համապատասխան կուսակցությունների կողմից, իսկ երկրի գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանի ու Ռազմավարական եւ ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի հիմնադիր, նախկին ԱԳ նախարար Րաֆֆի Հովհաննիսյանի, «Հեռանկար» կենտրոնի ղեկավար Արամ Կարապետյանի թեկնածությունները քաղաքացիական նախաձեռնության կարգով:

• Երեւանում բացվեց Անդրանիկ զորավարի արձանը

ԵՐԵՎԱՆ, 25 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ : Պատվանդանի վրա Անդրանիկ զորավարը կանգնած է երկու ձիով: Դեպի վեր, երկինք է պարզած սուրը, իսկ ձիերի ոտքերի տակ օձի տեսքով ձգնվում է ոսիխը: Շատ տարիներ առաջ տեսնելով այս արձանի մակետը Երեւանում, արվեստանոցում, Վիլյամ Սարոյանն ասել է՝ աղվոր է, բացումին զիս կիրավիրեք, բան ունիմ պատմելու զորավարի մասին: Այդ խոսքերը նա ասել է Սերո Խանգաղյանի, Հովհաննես Շիրազի, Հրանտ Մաթևոսյանի, Վահագն Դավթյանի, Ջորի Բալայանի ներկայությամբ:

Վիլյամ Սարոյանը ծնվել է այն քաղաքում, որտեղ վախճանվել է հայ ժողովրդի հերոս զորավարը ու, քսան տարեկան, այն մարդկանց թվում է եղել, ովքեր նրա աճյունը ճանապարհել են Փարիզ, որպեսզի հանգչի Պեր Լաշեզ գերեզմանատանը:

«Սակայն, ավաղ, Սարոյանի կենդանության օրոք հնարավոր չէր կանգնեցնել օձի տեսքով դաժան թշնամուն սմբակների տակ գցած արձան», դեկտեմբերի 25-ին հանդես գալով արձանի բացման հանդիսավոր արարողությանը, պատմեց գրող, հրապարակախոս Ջորի Բալայանը: Ի մասնավորի, նա առաջարկեց դեպի Երեւանի սբ. Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցի տանող ծառուղու մյուս կողմում էլ դնել Գրիգոր Նարեկացու արձանը, քանի որ կան մեր ժողովրդին խորհրդանշող խաչը եւ սուրը, սակայն, պակասում է գրիչը:

Արձանի կառուցումն իրագործողներին (ՀՀ պաշտպանության նախարարություն եւ նախարար Սերժ Սարգսյան, ամերիկահայ բարերար Վահրամ Շիրինյան), հեղինակներին (քանդակագործ Արա

Շիրազ, ճարտարապետ Ասլան Մխիթարյան) շնորհակալության խոսք ասացին Երեւանի քաղաքապետ Ռոբերտ Նազարյանը, ՀՀ պաշտպանության փոխնախարար, գեներալ-լեյտենանտ Սիքայել Գրիգորյանը, Ջորի Բալայանը, «Ձորավար Անդրանիկ» բարեգործական միության նախագահ Նորայր Մուշեղյանը: Իր հասցեին ասված խոսքերի համար շնորհակալություն հայտնեց Վ.Շիրինյանը:

Իր ելույթում Երեւանի քաղաքապետը նշեց, որ արձանն իր շրջապատով դառնալու է Երեւանցիների սիրված վայրերից մեկը եւ միջոցառումը համարեց մայրաքաղաքի կյանքում նշանակալից իրադարձություն:

Արձանի բացման պատիվը տրվել էր ՀՀ նախագահի ռազմական հարցերով խորհրդական, գեներալ-լեյտենանտ Գուրգեն Դալիբալայանին, բարերար Վ.Շիրինյանին եւ Ն.Մուշեղյանին:

Արձանը եկեղեցական կարգով օրհնեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանը, որը միաժամանակ ներկայանալով փոխանցեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի ողջույններն ու հայրապետական օրհնությունը:

Բրոնզաձույլ արձանի վերաբերյալ, որը պատվանդանով հանդերձ ունի 9 մետր բարձրություն, Արմենայրեսի թղթակցին իր մտորումները ներկայացրեց Արա Շիրազը, հատկապես շեշտելով, որ նրա կառուցումն ու տեղադրումը իր կյանքի կարեւոր խնդիրներից են եղել: «Անդրանիկը մեր ժողովրդի մեծագույն զավակներից է, նրա հանդեպ մեծագույն սերը նրան դասել է Սասունցի Դավթի ու Վարդան Մամիկոնյանի շարքը: Ուրախ եմ, որ վերջապես իրականություն դարձավ երազանքս», - նշեց քանդակագործը:

Արձանի բացման արարողությանը մասնակցած ՀՀ պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, ՀՀ տարածքային կառավարման եւ արտադրական ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանը, հայ բանակի գեներալներն ու բարձրաստիճան սպաները, հանդիսության մյուս մասնակիցները ճերմակ մեխակներ դրեցին հուշարձանի պատվանդանին:

Արարողության ընթացքում կարգված էր զինվորական պատվո պահակախումբ, նվագախումբը հնչեցնում էր զինվորական քայլերգեր:

• Սպանվել է ՀԱՀ խորհրդի նախագահ Տիգրան Նաղդալյանը

ԵՐԵՎԱՆ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ.

ԱՐՄԵՆՊՐԵՍ : Դեկտեմբերի 28-ի երեկոյան, ժամը 19.30-ի սահմաններում, մայրաքաղաքի Չաքյան փողոցի վրա գտնվող ծնողների բնակարանից դուրս գալիս, անհայտ անձի կողմից հրազենային վնասվածքներ է հասցվել Հանրային



հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Տիգրան Նաղդալյանին:

Հայտնի լրագրողը տեղափոխվել է մայրաքաղաքի քիվ 3 կլինիկական հիվանդանոց: Հաստատության գլխավոր բժիշկ Սամվել Հարությունյանն Արմենպրեսին տեղակացրեց, որ Տ.Նաղդայանն իրենց մոտ է տեղափոխվել ժամը 20-ի սահմաններում: Բժիշկներն անմիջապես սկսել են լրագրողի վիրահատությունը, սակայն, վիրահատության ընթացքում, մոտ մեկուկես ժամ հետո, Նաղդայանը մահացել է:

Ինչպես հայտնեցին ՀՀ գլխավոր դատախազությունում, քրեական օրենսգրքի 61 հոդվածի հատկանիշներով՝ տեռորիստական ակտ, հարուցվել է քր. գործ եւ կատարվում է նախաքննություն: Այս պահի դրությամբ ձերբակալվածներ, կալանավորվածներ չկան: Ստեղծվել է քննչական օպերատիվ խումբ, որի կազմում ընդգրկված են դատախազության, ոսիտակնության եւ Ազգային անվտանգության ծառայության ներկայացուցիչներ:

• **ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանի հայտարարությունը**

29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Տիգրան Նաղդայանի սպանության



կապակցությամբ հայտարարությամբ հանդես է եկել ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը: Նրանում ասված է. «Հարգելի հայրենակիցներ, ես ցնցված եմ ահաբեկչության այս ստոր դրսեւորումից: Այն մարդիկ, ում համար ոչինչ չարժի մարդկային կյանքը, ում հանգիստ

չեն տալիս երկրի կայունությունն ու առաջընթացը, ովքեր բացարձակապես հաշվի չառան ժողովրդի այս պահի տոնական տրամադրությունը, ձեռնոց նետեցին ամբողջ հասարակությանը: Ձեռք բարձրացնելով ամենաարժեքավորի՝ մարդկային կյանքի վրա, ահաբեկիչները նպատակ ունեն թիկունքից հարվածել նրանց, ովքեր իրենց ամենօրյա աշխատանքով ջանում են ստեղծել խաղաղ, կայուն եւ բարգավաճ հայրենիք: Հանցագործության գաղափարից մինչեւ կատարման եղանակը հուշում են, որ գործ ունենք ստորագույն արարածների հետ: Դա չի ներվի ոչ իմ, ոչ հասարակության կողմից:



ՀՀ վարչապետ Ա.Մարգարյանի է ցավակցական խոսքը Տ.Նաղդայանի սպանության կապակցությամբ

ԵՐԵՎԱՆ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը ցավակցական խոսք է

հղել Տիգրան Նաղդայանի սպանության կապակցությամբ: Նրանում ասված է.

«Խորապես վշտացած եմ Տիգրան Նաղդայանի չարանենգ սպանության կապակցությամբ: Մեր լրատվության ամենաաչքի ընկնող դեմքերից մեկի դեմ գործված այդ դաժան, անմարդկային եւ փոքրոգի ոճիրը որեւէ արդարացում չունի: Տիգրան Նաղդայանը կանգնած էր հանրապետությունում նոր որակի լրատվական քաղաքականության, հատկապես հանրային հեռուստատեսության ծեւավորման ակունքների մոտ եւ, վերջին տարիներին լինելով այդ բնագավառի ղեկավարներից մեկը, մեծ ջանքեր էր գործադրում ոլորտի հետագա զարգացման համար: Այս իմաստով, կարծում եմ, կատարվածն ուղղված էր նաեւ ավելի հեռահար նպատակի՝ մեր երկրում բացախսության, խոսքի ազատության, ժողովրդավարական արժեքների արմատավորման դեմ ընդհանրապես: Վստահ եմ, որ այդ քստմնելի ոճրագործության հեղինակները անպայման կհայտնաբերվեն եւ կկրեն իրենց արժանի պատիժը՝ օրենքի ամբողջ խստությամբ:

• **ՀՀ ԱԺ նախագահի ցավակցությունը Տ.Նաղդայանի մահվան կապակցությամբ**

ԵՐԵՎԱՆ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայտնի լրագրող Տիգրան Նաղդայանի սպանության կապակցությամբ



ցավակցություն է հայտնել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը: Նրանում ասված է. «Խորապես վշտակցում եմ հանրաճանաչ հեռուստալրագրող Տիգրան Նաղդայանի հարագատներին ու մտերիմներին, գործընկերներին՝ նրա ողբերգական մահվան կապակցությամբ եւ սզում եմ նրա անժամանակ կորուստը:

Համոզված եմ, որ հանցագործությունը արագ կբացահայտվի եւ մարդասպանն արժանի պատիժը կստանա: Դատապարտում եմ նման հաշվեհարդարը եւ զգոնության ու պատասխանատվության կոչ եմ անում: Ինչ անում էլ ունենա ահաբեկչությունը, պետք է իսպառ արմատախիլ արվի: Վերստին ընդունեք խորից ցավակցություններս»:

• **Վեհափառ հայրապետը ցավակցում է սգակիր Նաղդայան ընտանիքին**

ԷՋՄԻԱԾԻՆ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ամենայն հայոց Վազգեն Բ կաթողիկոսը իր ցավակցություններն է հղել Նաղդայան ընտանիքին:

«Խոր ցավ եւ վրդովմունք ապրեցինք՝ տեղեկանալով Հայաստանի Հանրային Հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ, եռանդաշատ ու կարող լրագրող Տիգրան Նաղդայանի եղերական մահվան մասին: Սիվավոր ոճրագործությամբ խռովված է մեր ժողովրդի հոգին:

Հանուն Ամենայն հայոց կաթողիկոսության, Գերագույն հոգեւոր խորհրդի, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության եւ բարեպաշտ հավատացելոց՝ Մեր անկեղծ ցավակցությունն ենք

Հայոց Ափյուռք

բերում հանգուցյալի սգացյալ ընտանիքին, հարազատներին ու գործընկերներին եւ դատապարտում չարագործ այս բռնարարը:

Հայրապետիս աղոթքն է առ Բարձրյալն Աստված, որ Տերը խաղաղության ու սիրո մեջ պահի ժողովրդին եւ իր գթառատ ողորմածությամբ երկնային երանական բարձունքներում լույսերի մեջ ընդունի ննջեցյալի հոգին:



• Ստեղծվել է Տ.Նաղայանի հուղարկավորության կառավարական հանձնաժողով

ԵՐԵՎԱՆ, 29 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վարչապետ Անդրանիկ Մարգարյանի որոշմամբ, ստեղծվել է Տիգրան Նաղայանի հուղարկավորման կառավարական հանձնաժողով՝ պաշտպանության նախարար Սերժ Մարգարյանի նախագահությամբ:

Ըստ ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության, հանձնաժողովի կազմում ընդգրկվել են առողջապահության նախարար Ա.Սկրտչյանը, մշակույթի, երիտասարդության հարցերի եւ սպորտի նախարար Ռ.Շառոյանը, ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Պ.Սաֆարյանը, տրանսպորտի եւ կապի նախարարի առաջին տեղակալ Հ.Բեգլարյանը, ներքին գործերի նախարարի տեղակալ Հ.Վարյանը, Երեւանի քաղաքապետի տեղակալ Վ.Վարդապետյանը, ՀՀ նախագահի խորհրդական Ա.Հարությունյանը, ՀՀ նախագահի մամուլի քարտուղար Վ.Գաբրիելյանը, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲ ընկերության գործադիր-տնօրեն Ա.Արզումանյանը, «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» ՓԲ ընկերության գործադիր-տնօրեն Ա.Ամիրյանը, «Պրոմեթեւս» հեռուստաընկերության գործադիր-տնօրեն Ս.Մայրապետյանը, «Հայոց աշխարհ» օրաթերթի գլխավոր խմբագիր Գ.Սկրտչյանը, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ի սեփական թղթակից Տ. Լիլոյանը:

• Ծիծեռնակաբերդում կառուցվելու է եկեղեցի

ԵՐԵՎԱՆ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ. ԱՐՄԵՆՊՐԵՍ (թղթ. Վանիկ Սանթրյան): Ի հիշատակ Հայոց ցեղասպանության զոհերի, Ծիծեռնակաբերդում կառուցվելու է եկեղեցի: Այս մասին ղեկտեմբերի 23-ին հայտարարեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը, Թեքեյան կենտրոնում իր ունեցած «Հայ եկեղեցին 21-րդ դարում» ատենախոսության ժամանակ: Վեհափառ հայրապետի ասելով, եկեղեցու կառուցման ծրագիրն ընթացքի մեջ է:

Նորին Սրբությունը միաժամանակ տեղեկացրեց, որ եկեղեցի է կառուցվելու նաեւ Ստեփանակերտում, իսկ Դադիվանքը նորոգվելու է:

• Անդի Մաղատյան

Չանասիրությունից հոշակ...

Ամերիկահայ երգիչ Անդի Մաղատյանը, որ մոտ երկու ամիս առաջ մեկ շաբաթով Հայաստանում էր եւ իր համերգի եկամուտը հատկացրել էր դպրոցներին, ղեկտեմբերի 10-ին Լոս Անջելեսի քաղաքապետարանում արժանացել է քաղաքապետի հատուկ գնահատականին՝ երգարվեստին բերած իր նպաստի համար: 200-ից ավելի երկրպագուներ ջերմորեն ողջունել են նրան: Ելույթ ունեցողները գովեստով են արտահայտվել նրա մասին, նշելով, որ նա հասել է իր նպատակին՝ շնորհիվ Չանասիրության, հետեւողականության եւ հավատի: Քաղաքային խորհրդի անդամ Ֆրենկ Քուլինտերոն ավելացրել է, որ «նա Գլենդեյլի հարգարժան քաղաքացիներից է եւ շատ մեծ ներդրում ունի համայնքում»:

Մ. Նահանգներում նա ելույթներ է ունեցրել Հունական թատրոնի շենքում, Լոս Անջելեսի «Ունիվերսալ ամֆիթատրոնում» եւ Գլենդեյլի «Ալեքս» թատրոնում: Երեք տարի շարունակ ճանաչվել է լավագույն երգիչ: Նրա համբավը դուրս է եկել Մ. Նահանգներից: Նա մեծ հաջողություններ է ունեցել նաեւ Կանադայում, Ավստրալիայում, Միջին Արեւելքի եւ Եվրոպայի մի շարք երկրներում:

Սիջազային

• Աղթամարի փխն ու վախը

Հատուկ «Լոս Անջելես թայմս» թերթի համար գրված հոդվածում, որը հրատարակվել է ղեկտեմբերի 9-ին, Ամբերին Չաման անունով լրագրողը թուրքիայից ահազանգ է բարձրացրել Աղթամարի վանքի անմխիթար վիճակի մասին՝ մեղադրելով համապատասխան մարմիններին անտարբերության մեջ: «Դարեր շարունակ կողոպուտի ու սրբապղծությունների դիմանալուց հետո, ներկայումս այս սուրբ աղոթավայրը կանգնած է փլուզման եզրին», գրում է նա՝ վկայակոչելով հնէաբան եւ Վանի պետական թանգարանի տնօրեն Մետե Թոզկապորանի կարծիքը, որն ասել է. «Եթե անմիջապես վերականգնողական աշխատանքներ չձեռնարկվեն, հնարավոր չի լինի փրկել վանքը»: Բայց, որպես պետական պաշտոնյա, նա չի ասել, թե ինչո՞ւ մինչ օրս այդ աշխատանքները չեն սկսվել:

Մյուս կողմից, սակայն, մշակույթի նախարար Հուսեփն Չելիքը, որն իշխող «Արդարություն եւ բարգավաճում» կուսակցության անդամ է, ավելի համարձակ է գտնվել՝ ասելով. «Մենք դեմնահանդիման եք որոշ նեղմիտ մարդկանց հայտարարած քաղաքականության, որոնք դեմ են հայկական հուշարձանների վերականգնմանը... Այդ մարդիկ վախենում են, թե վերանորոգված վայրերը որպես ապացույց կժառայեն, որ հայերը մի ժամանակ ապրել են այստեղ եւ կարող են մեր հողերի նորանոր պահանջներ ներկայացնել»: Նա խոստացել է առաջնահերթ ուշադրություն դարձնել Աղթամարի վանքի վերանորոգման աշխատանքներին: Ըստ հոդվածագրի, ցարդ վերականգնման աշխատանքներին նյութապես օժանդակելու արեւմտյան երկրների առաջարկներին թուրքական

կառավարությունը բացասաբար է պատասխանել, իսկ Վանի թանգարանի «Ցեղասպանություն» բաժնում ներկայացված են իբր հայերի սպանած թուրքերի գանգերն ու ոսկորները:

«Այդ բոլոր անհեթեթություններին շուտով վերջ կտրվի, խոստանում է Չիլիքը, եթե մենք Արեւմուտքից ենք հանդուրժողականություն հայցում, ապա առաջին հերթին մենք պետք է հանդուրժողականություն ցուցաբերենք այստեղ մեր երկրում»:

«Ակօս» հայկական թերթի խմբագիր Հրանդ Դինքը նշել է, որ չնայած թուրքական իշխանությունները գիտակցում են, որ նման հուշարձանների վերականգնումը զգալիորեն մեծացնելու է զբոսաշրջությունը երկրում, նրանց հիվանդագին մտայնությունը, համենայն դեպս, թույլ չի տալիս առողջ դատել: Նորընտիր կառավարությունն արդյոք ուժ կգտնի՞ ջարդելու հին, քարացած կաղապարները:

- «Թուրքիան պիտի ընդունի Հայոց ցեղասպանությունը»

Հայտարարել է Ֆրանսիայի փոխարտգործնախարար Ռենո Մյուսելյեն

ՓԱՐԻՉ, 23 ԴԵԿՏԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Թուրքիան պիտի ընդունի, որ 1915-1917 թվականների հայերի զանգվածային սպանությունը ցեղասպանություն էր, դեկտեմբերի 22-ին հայտարարել է Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարի տեղակալ Ռենո Մյուսելյեն «Տեյ» ռադիոկայանին տված հարցազրույցում: «Առաջ շարժվելու համար անհրաժեշտ է ճանաչել եւ ընդունել անցյալը, եւ, կարծում եմ, որ այդ որոշումը կարելու է թե խելամտության, եւ թե հավասարակշռության տեսակետից»,- ավելացրել է նա:

Լուրը տարածած Ֆրանսպրես լրատվական գործակալությունը նշում է, որ Եվրամիությանն անդամակցության ճանապարհին Թուրքիայի առջեւ կարմիր լույս վառած Փարիզի այս մեկնաբանությունը հավանաբար էլ ավելի կզայրացնի Անկարային:

Երբ անցյալ տարվա հունվարին Ֆրանսիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, լրացնում է «Ազատությունը», Թուրքիան անմիջապես սառեցրեց Ֆրանսիայի հետ համատեղ իրականացվող մի քանի խոշոր տնտեսական ծրագրեր: Այս տարվա հունվարին երկկողմ հարաբերություններում նկատվում էր որոշակի աշխուժացում, նույնիսկ ջերմացում: Սակայն Կոպենհագենում Ֆրանսիան կրկին բացեց սառը ցնցուղը, առաջարկելով Եվրամիությանը՝ առնվազն երկու տարով հետաձգել Թուրքիայի անդամակցության խնդրի լուծումը:

Շիշողությունը չի լուծւում Սրտառուչ մի դրվագ

1988թ. դեկտեմբերի 7. մտահոգ, բայց բարի սրտով պատրաստվում էինք հրաժեշտ տալ տարվան, որ հոգեւոր զարթոնքի ու մեծ փորձությունների տարի էր եղել մեզ համար: Հավատալով գորբաչովյան դեմոկրատիայի կարգախոսներին՝ հայ ժողովուրդը բարձրացրեց դարասկզբին բոլշեւիկների ստեղծած Ադրբեջանին բռնակցված հայոց Արցախի հարցը: Ի պատասխան Երեւանի, Ստեփանակերտի խաղաղ հանրահավաքների՝ 1915թ. եղեռնի ծանոթ ձեռագրով Սումգայիթում, Բաքվում հոսեց հայի արյունը, հազարավոր մարդիկ ենթարկվեցին բռնազաղթի:

Կրեմլյան ղեկավարների անտարբերությունը կատարվածի նկատմամբ, կենտրոնական լրատվամիջոցների աղճատված, անորոշ լուրերը գալիս էին փաստելու, որ շուտ էինք հավատացել արդարության խոստումներին, բայց ոչինչ այլեւս անկարող էլ խեղդել արթնացած ազատության կանչը: Եվ, չգիտես ինչու, հենց այդ պահին կատարվեց անկանխատեսելի Ռզու մեր թռիչքը քարացավ ընդերքի ահասարսուռ ցնցումներից: Մի քանի



ակնթարթում փլատակների վերածվեցին Լեւինականը, Սպիտակը, տասնյակ ու տասնյակ գյուղեր, փլատակների տակ անշնչացան տասնյակ հազարավոր մարդիկ, հազարավորները դատապարտվեցին հաշմանդամ գոյության: Արտերկրում պաշտոնական այցը կիսատ թողած աղետի գոտի շտապեց Գորբաչովը ու չարագուշակ մտայլվեց, երբ Լեւինականում հարազատներ, օջախ կորցրած վշտաբեկ մարդիկ հարցրեցին ինչպե՞ս է լուծվելու Ղարաբաղի հարցը: Նա անկարող էր ընկալել, որ, փլատակների տակ, մարդկանց իրենց վիճակից առավել հուզում էր բռնակցված հայոց հողի ճակատագիրը, որ դանթեական այդ դժոխքում մարդիկ չէին կորցրել երեւույթների բնականոն կապը:



Եվ, այնուամենայնիվ, մեր հոգին խոցված էր, կորստի ցավից առավել տանջում էր հարցականը՝ ինչու՞ հենց այդ պահին արթնացավ ընդերքը: Դժվար է ասել՝ կդիմանայի՞նք անսահման վշտին, եթե մեզ չզորակցեր աշխարհը: Լսելով Արարատի երկրին պատուհասված աղետի մասին աշխարհի բոլոր ծայրերից մարդիկ շտապեցին օգնության: Նյութական օգնությունից առավել նեցուկ ու փրկարար էին մարդկային սրտերի ջերմությունն ու կարեկցանքը: «Զվարթնոց» օդանավակայանում անընդմեջ վայրէջք կատարող «Բոինգների» զորեղ ձայներից ցնցվում, զրնգում էին Երեւանի Հարավ-արեւմտյան զանգվածի բազմահարկ շենքերի ապակիները:

...Հազարածեք այդ օգնության սրտառուչ մի դրվագ հիշում եմ միշտ եւ առանձնապես՝ դեկտեմբերյան այս օրերին: ԳՖՀ-ի Ձիգմարինգեն քաղաքի բնակիչ, 37-ամյա Ռոբերտ Ջաուերին հանդիպեցի 1989-ի զարմանք՝ Երեւանի պրոթեզաօրթոպեդիկ ձեռնարկությունում: Ստած հաշմանդամի սայլակին նախանշում էր, իսկ չորս կողմը տասնյակ ու տասնյակ շարժասայլակներ էին շարված: Նա չգիտեր հայերեն, ես՝ գերմաներեն: Ուղեկիցը՝ 24-ամյա հյուսն Ֆրանց Յեգելը՝ Ֆուլենդորֆ քաղաքից, լավ տիրապետում էր ռուսերենին: Նա սիրով ստանձնեց թարգմանչի դերը: Պատմեց, որ ավտովթարի հետեւանքով Ռոբերտը գրկվել է ոտքերից եւ ընդմիշտ գամվել շարժասայլակին: Դեկտեմբերի 7-ի երկրաշարժի լուրն առնելով՝ անմիջապես մեկնել է Լենինական: Տեսնելով ավերածության ցնցող պատկերները՝ անմիջապես վերադարձել է հայրենիք եւ հեռուստատեսությամբ դիմել մարդկանց. «Երկրաշարժի հետեւանքով շատ հայ երիտասարդներ ինձ նման գրկված են քայլելու կարողությունից: Եթե ձեր տանը կա նմանատիպ շարժասայլակ, ինչպիսին իմն է՝ խնդրում եմ ուղարկեք իմ հասցեով: Դրանք պետք է հասցնել Լենինական»:

Արձագանքները չուշացան: Հիմա պետք էր լուծել շարժասայլակներն աղետի գոտի հասցնելու խնդիրը: Մեծ անհրաժեշտությունը մարդուն դարձնում է հնարամիտ: Ռոբերտ Ջաուերը խնդրանքով դիմում է ԳՖՀ-ում խորհրդային դեսպանատան աշխատակիցներին. «Հայաստան ես կմեկնեմ իմ միջոցներով: Օգնեք տեղափոխելու շարժասայլակները»: Մեկի փոխարեն նրան տրամադրում են երեք բեռնափոխադրիչ: Բարեհաջող տեղ հասցնելով բեռը՝ Ռոբերտն ու հյուսն Ֆրանցը Երեւանի պրոթեզաօրթոպեդիկ ձեռնարկությունում շարժասայլակները հարմարեցնում են տարբեր տարիքի հաշմանդամներին, հիմնականում երիտասարդներին, որոնք բուժվում էին պրոթեզաօրթոպեդիկ ձեռնարկությանը կից հիվանդանոցում:

-Մինչեւ բոլորին չսովորեցնեմ ազատ տիրապետել շարժասայլակին՝ իմ գործն ավարտված չեմ համարի,- ասաց Ռոբերտ Ջաուերը:

-Ես նրանց անունները կհայտնեմ շարժասայլակների տերերին, թող իմանան՝ ստույգ ո՛ւմ են օգնել իրենց նվիրատվությամբ:

Հարցրեցի՝ երեխաներ ունի՞: Ռոբերտ Ջաուերի թախծոտ աչքերը պայծառացան: Ծոցագրպանից հանեց մի փոքրիկ լուսանկար՝ «Դուստրս է Սիմոնեն»: Լուսանկարից նայում էր մի չքնաղ աղջնակ, որը նազանքով հպվել էր ծնողներին: Հպանցիկ հայացքն իսկ բավական էր՝ զգալու, որ այս ընտանիքում թագավորում են սերն ու նվիրվածությունը:

-Հայաստան մեկնելուս օրը Սիմոնեն իր խաղալիքները լցրեց ճամպուրակի մեջ եւ խնդրեց՝ այդ տասը խաղալիքը իր անունից նվիրեմ հայ երեխաներին: Համաձայնեցի, բայց հետո սկսեցի մտատանջվել՝ ես այս տասը խաղալիքը կհանձնեմ տասը փոքրիկների, իսկ մյուսները չեմ ստանա ոչինչ, որքանով ճիշտ կլինի: Որոշեցի խաղալիքները չբերել:

Դեռ դպրոցական տարիներին շատ գրքեր եմ կարդացել Հայաստանի մասին, լավ գիտեմ նրա զարմանալի պատմությունը: Սիմոնեի համար հայկական հեքիաթներ եմ կարդում, որոնցում շատ

բարություն կա: Հայերը ջերմ, սրտաբաց ժողովուրդ են: Ընդհակառակը եմ լավ ընդունելության համար:

...Ամեն անգամ, երբ ճանապարհս տանում է Գյումրի, հիշում եմ երգի, պոեզիայի սիրահար սրամիտ գյումրեցիներին, սիրտս լցվում է: Ու որպես սփոփանք՝ արթնանում եմ Ռոբերտ Ջաուերի խոսքերը. «Մենք բոլորս Երկրի զավակներն ենք, ընդհանուր են մեր ցավն էլ, ուրախությունն էլ: Ես հավատում եմ ժողովուրդների բարեկամությանը»: Այս խոսքերն առանձնակի կարեւորվում են այսօր, երբ խարխուլվել է աշխարհի ներդաշնակությունը, ազգը՝ ազգի ու մարդը՝ մարդու դեմ է:

... Դեկտեմբերի 7: Տարիների հեռվից հիշում եմ եւ կրկին շնորհակալություն հայտնում նրան, ով, գրկված լինելով քայլելու կարողությունից, մեզ համար դժվարին ժամի հասավ աղետի վայր՝ օգնելու իր նման՝ քայլելու կարողությունից գրկված հաշմանդամների: Պատկերացնում եմ՝ ինչ հմայիչ օրհորդ է դարձել Սիմոնեն: Գուցե արդեն հարսնացել է: Մաղթում եմ նրան ամենամեծ երջանկությունը՝ մայրություն, եւ առողջ ու երջանիկ կյանք: Ինչպես Ռոբերտ Ջաուերն էր ասում՝ «Մենք բոլորս ունենք մի հասցե՝ Երկիր»: Դա զգացիցք 1988-ի դեկտեմբերին, երբ մեզ հետ էր աշխարհը: Մենակ չէինք մեր մեծ վշտի հետ: Չկա ավելի մեծ զգացում, երբ օգնում ես նեղության մեջ հայտնվածին, ապրում անանձնական սիրով: Միայն այդպես կհարատեւի մեր մեծ Տունը՝ փոքրիկ ու փխրուն այս երկրագունդը: Ասպրամ ԾԱՌՌԻԿՅԱՆ

Անցնող տարվա ազգային-քաղաքական կարեւորագույն իրադարձությունները

- Երրորդ հանրապետության պատմության մեջ 2002-ը ամենակայուն, առաջընթացի տարին էր

Անուղղելի հոռետեսներն անգամ նկատում են, որ 2002 թ. մեր կյանքը մի քիչ, թեկուզ շատ քիչ, բարելավվել է: Չենք կարող պնդել, թե հանրապետությունում վերջին 2-3 տարիներին արձանագրած տնտեսական աճը, մի քանի հազար աշխատատեղերի վերականգնումը, նոր ձեռնարկությունների հիմնադրումը, օտարերկրյա ներդրումների նկատելի աճն ուղղակիորեն ազդել են շարքային քաղաքացու՝ գյուղացու, բանվորի կյանքի բարելավմանը, որ հայ մարդու դեմքին ավելացել է ժպիտը կամ հայն այլեւս իր բարեկեցությունը չի փնտրում պանդխտության մեջ: Չարորակ քաղցկեղի պես երկիրը մաշող արտագաղթի ծավալները կարծես թե նվազել են, կարծես թե չկա սեփական տունը Լոս Անջելեսի ինքնաթիռի երկու տոնսով փոխանակող եւ հայրենիքից փախչող հայը:

2002 թ. Հայաստանում, ԼՂՀ-ում եւ սփյուռքում տեղի ունեցան ազգային-քաղաքական բազմաթիվ իրադարձություններ: Դրանցից առանձնացրել ենք չորսը՝ իրենց կարեւորությամբ եւ հնչեղությամբ. Հայաստան-սփյուռք երկրորդ խորհրդաժողով, ԼՂՀ նախագահական ընտրություններ եւ ԼՂ հակամարտության կարգավորման գործընթաց, «Հայաստան» համահայկական հիմնադրամի ազգային տուրքի հեռուստամարաթոն, Բեթղեհեմի վանքապատկան Ձիթենյաց այգիների զավթում: Բացի վերոնշյալներից, տեղի ունեցան արժանահիշատակ այլ իրադարձություններ, որոնց ամբողջական պարբերությամբ:

- Հանրապետության նախագահը տարվա ընթացքում պաշտոնական այցերով եղավ Տաջիկստանում, Կիրգիզիայում, Սլովակիայում, Ավստրիայում, Արգենտինայում, Ուրուգվայում, Բրազիլիայում, Լատվիայում, Լիտվայում, Էստոնիայում, ԱՄԷ-ում, Քաթարում, Բելառուսում: Ռոբերտ Քոչարյանը շրջայցեր կատարեց հանրապետության բոլոր մարզերում:

- 2002 թ. հանրապետություն ժամանեցին Ուկրաինայի նախագահ Լ. Կուչման, ՌԴ առաջին նախագահ Բ. Ելցինը, ՌԴ գործող նախագահի տիկինը, տարբեր մակարդակների պատվիրակություններ աշխարհի մի քանի տասնյակ երկրներից:

- Հունվարին ԱՄՆ նախագահ Բուշը ստորագրեց Ազատության աջակցության ակտի 907 ուղղումը ժամանակավորապես կասեցնող փաստաթուղթ: Այս փաստաթուղթը ԱՄՆ կառավարությանը հնարավորություն տվեց ուղղակի օգնություն տրամադրել ՀՀ-ի եւ ԼՂՀ-ի հետ պատերազմի մեջ գտնվող Ադրբեյջանին, այդ թվում նաեւ ռազմական ուղորտում:

- Հայ-թուրքական հարաբերություններում եական առաջընթաց չարձանագրվեց. թուրքական կողմը Հայաստանի հետ հարաբերություններ հաստատելու պատրաստակամություն հայտնելուց զատ գործնական քայլերի չդիմեց: Տարբեր համաժողովների շրջանակներում ՀՀ արտգործնախարար Վ. Օսկանյանը երեք անգամ առիթ ունեցավ հանդիպել իր թուրք գործընկերներ Ջեմի եւ Գյուրելի հետ: Մասնավորապես Ռեյկյավիկում կայացած հանդիպումից հետո վերադառնալով Անկարա, Ջեմը կրկնեց այն նախապայմանները, որոնց իրականացման դեպքում միայն Անկարան հարաբերություններ կհաստատի Հայաստանի հետ. ա) ՀՀ-ն պետք է հրաժարվի թշնամանք սերմանելու սովորությունից՝ Ցեղասպանության խնդիրը թողնելով պատմաբանների ուսումնասիրությանը, բ) ՀՀ-ն պետք է Սահմանադրությունից վերացնի տարածքային պահանջների հոդվածները, գ) կարգավորի ԼՂ խնդիրը եւ ԼՂ-ի տարածքից դուրս բերի հայկական բանակը, դ) ՀՀ-ն պետք է միջանցք տրամադրի Ադրբեյջանի եւ Նախիջեւանի միջեւ կապն ապահովելու համար:

- Ռուսաստանի մի շարք մարզերում տարվա ընթացքում կատարվեցին հակահայկական գործողություններ. Կրասնոդարում երիտասարդ ստահակների խումբը պղծեց հայերի գերեզմանները, Սլավյանսկ քաղաքում հարձակման ենթարկվեցին ազգությամբ հայ բնակիչները, մերձմոսկովյան Կրասնոարմեյսկ քաղաքում հայկական ջարդերից տարբեր աստիճանի վնասվածքներ ստացան երկու տասնյակ հայեր:

- Հայ-ռուսական հարաբերություններում կարելու իրադարձությունը «Գույք պարքի դիմաց» ծրագիրն էր, որով Հայաստանը Ռուսաստանին ունեցած մոտ 100 մլն դոլարի պարտքը մարեց՝ այդ երկրին հանձնելով 5 ձեռնարկություններ: Տարվա ընթացքում տեղի ունեցան հայ-ռուսական տարբեր մակարդակների տասնյակ երկկողմ այցելություններ:

• Հայաստան- սփյուռք երկրորդ խորհրդաժողովը

Մայիսի 27-28-ը Երեւանում տեղի ունեցավ Հայաստան-սփյուռք երկրորդ խորհրդաժողովը՝ մասնակցությամբ 48 երկրներից ժամանած մոտ 3000 պատվիրակների: Ի տարբերություն առաջին

նմանօրինակ համաժողովի, այս անգամ քննարկումներն անցկացվեցին չորս առանձին սեկցիաներում. ա) քաղաքական խնդիրներ՝ ՀՀ-սփյուռք հարաբերություններ, բ) տեղեկատվություն եւ զանգվածային լրատվամիջոցներ, գ) տնտեսություն եւ սոցիալ-տնտեսական զարգացում, դ) կրթություն, գիտություն եւ մշակույթ: Համաժողովում ելույթ ունեցան հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն, Մեծի տան Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն, ԼՂՀ նախագահ Արկադի Դուկասյանը, հայ ավանդական կուսակցությունների ներկայացուցիչները:

Այս համաժողովն ունեցավ մի շատ կարելու նշանակություն. հայության տարբեր հատվածներ Հայաստանից, ԼՂՀ-ից եւ սփյուռքից հնարավորություն ունեցան ի մի հավաքվել հայրենիքում, անցկացնել անկեղծ քննարկումներ համայն հայությանը հուզող շատ ու շատ հարցերի շուրջ:

Հոկտեմբերի 6-8-ը տեղի ունեցան «Ռուսաստանի հայերի միության» օրեր Հայաստանում եւ Արցախում, իսկ հոկտեմբերի 6-7-ը Մոսկվայում Արա Աբրահամյանի հովանավորությամբ կազմակերպվեց «Աշխարհի հայերը դարերի սահմանագծին» միջազգային խորհրդաժողովը՝ մասնակցությամբ 43 երկրներից ժամանած ավելի քան 300 հայերի:

• ԼՂՀ նախագահական ընտրություններ, ԼՂ հակամարտության կարգավորման գործընթաց

ԼՂՀ-ում տեղի ունեցան երրորդ նախագահական ընտրությունները: Օգոստոսի 11-ին դե ֆակտո անկախ, բայց միջազգային հանրության կողմից դեռեւս չճանաչված հանրապետության նախագահի պաշտոնում վերընտրվեց գործող նախագահ Արկադի Դուկասյանը քվեների բացարձակ առավելությամբ՝ մոտ 89 տոկոս: Ինչպես եւ նախորդ ընտրություններում, միջազգային հանրությունը դրանք զնահատեց ոչ օրինական: ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Եվրամիության երկրներից ժամանած անկախ դիտորդները ընտրությունները որակեցին ազատ, արդար եւ ժողովրդավարական, իսկ 46 կոնգրեսականներ շնորհավորեցին Դուկասյանին նախագահ վերընտրվելու կապակցությամբ:

ԼՂ հակամարտության խաղաղ գործընթացը լուրջ առաջընթաց չարձանագրեց, թեւ ԵԱՀԿ ՄԻՍ ամերիկացի եռանախագահ Ռ. Փերինան տարբեր առիթներով մշտն էր, որ հակամարտությունը 80 տոկոսով կարգավորված է: Հայաստանի եւ Ադրբեյջանի նախագահները եւս երեք անգամ հանդիպեցին Սադարակում, Քիշնեւում եւ Պրահայում: Ընդլայնվեց հակամարտության կարգավորման ֆորմատը՝ նախագահներ Քոչարյանի եւ Ալիեւի անձնական ներկայացուցիչներ Թաթուլ Մարգարյանը եւ Արազ Ազիմովը մի քանի հանդիպումներ ունեցան Չեխիայի մայրաքաղաք Պրահայի Շտիբիմ ամրոցում:

2002 թվականին ԵԱՀԿ Մինսկի խումբը երկու անգամ տարածաշրջանային այցով ժամանեց Երեւան, Ստեփանակերտ եւ Բաքու: Համանախագահները նշեցին, որ «ընդհանուր պետություն» բանաձեւն այլեւս անցյալ է եւ դարաբաղյան կարգավորման համար բերելու են նոր գաղափարներ:

Ադրբեյջանական կողմը տարվա ընթացքում մի քանի անգամ հերքեց հայկական կողմի պնդումները Դեկտեմբեր, 2002թ. **Էջ 12**

«փարիզյան սկզբունքների» առկայության մասին, դրանք համարելով հայերի երեակայության արդյունք: Յեղար Ալիեւը հունիսի 14-ին ֆրանսիացի եռանախագահ Յ. Պեռենի հետ հանդիպման ընթացքում «բացահայտեց» այդ սկզբունքները: Ըստ Ալիեւի, «փարիզյան սկզբունքների» տարրերից մեկը «Ադրբեջանը Հայաստանի Մեղրիի շրջանով Նախիջեւանին կապող եւ Հայաստանն՝ Ադրբեջանին Լաչինի շրջանով ԼՂ-ին կապող փոխադրամիջոցների բացումն էր, կողմերը քննարկել են Մեղրիի միջանցքի նկատմամբ Ադրբեջանին եւ Լաչինի միջանցքի նկատմամբ Հայաստանին սուվերեն իրավունքներ տալու հարցը, որ երկու միջանցքներն էլ պետք է ունենան միեւնույն կարգավիճակը, սակայն հայկական կողմը հետազայում խախտեց այդ պայմանավորվածությունը, ինչը բանակցությունների ձախողման հանգեցրեց 2001 թ. ապրիլին Քի Վեսթ քաղաքում»: Հայկական կողմը կտրականապես հերքեց Ալիեւի պնդումները: Հետագայում ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաները, որոնց թվում առավել հաճախ արտգործնախարար Գուլիեւը, նշեցին, որ չկան «փարիզյան սկզբունքներ»:

Ուշագրավ էր Սադարակում տեղի ունեցած Քոչարյան-Ալիեւ հանդիպումից հետո լրատվամիջոցներում շրջանառության մեջ դրված լուրը, թե Ադրբեջանը համաձայն է հայկական ուժերի վերահսկողության տակ գտնվող չորս շրջանների Ձանգեվանի, Ղուբաթլուի, Ֆիզուլիի եւ Ջեբրայիլի դիմաց վերաբացել Բաքու-Երեւան երկաթգիծը, սակայն, ըստ Ալիեւի, հայկական կողմն անընդունելի էր համարել դա: 2002 թվականի ընթացքում հարեւան հանրապետությունն ապրում էր ԼՂ հակամարտությունը ռազմական ճանապարհով լուծելու պոպուլիստական հայտարարություններով եւ Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի իշխանության վերադարձի անսրող հույսերով:

Ուշագրավ էր ամերիկացի եռանախագահ Ռ. Փերինայի հարցազրույցը «Էխո Մոսկվի» ռադիոկայանին: Դեկտեմբերի 11-ին ամերիկացի դիվանագետը հրապարակավ առաջին անգամ նշեց, որ հետխորհրդային տարածքի չորս հակամարտությունների մեջ դարաբաշյանն առանձնանում է, եւ եթե Աբխազիան, Հարավային Օսիան եւ Մերձդնեստրը պետք է մնան Վրաստանի եւ Մոլդովայի կազմում համապատասխանաբար, ապա Ղարաբաղի դեպքում խնդիրը փոքր-ինչ տարբեր է:

• **Ազգային տուրքի հեռուստամարաթոն**

Նոյեմբերի 28-ին Լոս Անջելեսում ավարտվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի ազգային տուրքի հերթական հեռուստամարաթոնը. ստացվեց ավելի քան 5 մլն դոլարի խոստում: Ինչպես նախորդ հեռուստամարաթոններում, այս անգամ եւս եղան խոշոր նվիրատվություններ. տիկին Լուիզ Սիմոն-Մանուկյան 1 մլն դոլար, Հրայր Հովհանյան 1 մլն, Ալբեր Բոյաջյան կես մլն դոլար: Անակնկալ մատուցեցին ՅՅ եւ ԼՂԳ գործարարները: Բարոյակալ առումով վերջիններիս մասնակցությունը անհրաժեշտ էր: Նախկին հեռուստամարաթոններին մեր գործարարների մասնակցության չափը շատ ժլատ էր, ինչն սփյուռքում հիասթափություն էր առաջացնում: Չէ՞ որ հանգանակվող գումարներն ուղղվում են Հայաստանի եւ Արցախի բարգավաճմանը: Այս անգամ

մեր գործարարները հանգանակեցին ավելի քան 260 հազար դոլար: 2002 թ. հեռուստամարաթոնի գումարներն ուղղվելու են ԼՂԳ-ի ողնաշարի «Հյուսիս-հարավ» 172 կմ երկարությամբ ավտոմայրուղու շինարարությանը: «Հայ ժողովրդի ճակատագիրը որոշվում է Արցախում», ԼՂԳ նախագահ Արկաղի Ղուկասյանի այս խոսքերը դարձան հեռուստամարաթոնի նշանաբանը:

• **Բեթլեհեմի Չիթենյաց այգիներ**

Հուլիսի 12-ին Երուսաղեմում լույս տեսնող «Ալ Ղոզ» արաբական պարբերականում տպագրված լուրը, որ իսրայելյան բանակը զավթել է Երուսաղեմի պատրիարքության Բեթլեհեմի Չիթենյաց այգիները, գայրությամբ ընդունվեց Հայաստանում եւ սփյուռքում: Պարոն Տերի վանքապատկան կալվածքի շուրջ տազնապ սկսվել էր դեռ 2001 թ. մայիսին, երբ «Ցահալը», առանց հայոց պատրիարքությանը զգուշացնելու, ներխուժել էր հայապատկան կալվածք: Պատրիարքության բողոքին ի պատասխան Իսրայելի պաշտպանության նախարարությունը հրապարակում է պաշտոնական հրաման՝ վեց ամսով ժամանակավորապես կալվածքը «պապահության նկատառումներով» գրավման տակ պահելու մասին: Արդեն օգոստոսին «Ցահալը» ավերում է Պարոն Տերի պարիսպը, հրասայլերի տակ ճգնում ձիթենիների մի մասը:

2002 թ. մայիսին Իսրայելի ՊՆ-ն հայտարարել էր Երուսաղեմի եւ Բեթլեհեմից հյուսիս գտնվող Այդա փախստականների ճամբարի միջեւ անվտանգության պատ կառուցելու մտադրության մասին, որն անցնում էր վանքապատկան կալվածքներով: Պարոն Տերի շուրջ ստեղծված տազնապ կենտրոնացրեց հայության ուժերը Հայաստանում եւ սփյուռքում: Այդ հարցով նամակներ հղվեցին անգամ ԱՄՆ նախագահ Բուշին: Երկարատեւ բանակցություններից, բողոքներից հետո միայն 2002 թ. նոյեմբերին Իսրայելը հրաժարվեց Բեթլեհեմի Չիթենյաց այգիներում անվտանգության պատ կառուցելու մտադրությունից, ինչպես նաեւ խոստացավ փոխհատուցել Պարոն Տերին պատճառած վնասները: Երուսաղեմի հայոց պատրիարքությունը Պարոն Տերում ստեղծված իրավիճակն ուշադրության կենտրոնում պահելու եւ աջակցելու համար երախտագիտություն հայտնեց Հայաստանի արտգործնախարարությանը, հայկական եւ ոչ հայկական մի շարք կազմակերպությունների, Հայ առաքելական եկեղեցուն, Հռոմի պապ Հովհաննես-Պողոս Բ-ին, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Բ-ին:

Պարոն Տերի միջադեպը որոշ չափով ազդեց հայ-իսրայելյան հարաբերությունների վրա, որոնք արդեն լարվել էին փետրվարին, երբ Հայաստանում Իսրայելի դեսպան Ռ. Կոհենը Երեւանում արել էր ոչ պարկեշտ արտահայտություններ: «Հոլըքոսթը եզակի երեւույթ է, քանի որ եղել է միշտ ծրագրված եւ նպատակ է ունեցել ոչնչացնել ամբողջ ազգը: Չարժե որեւէ բան համեմատել Հոլըքոսթի հետ», ասել էր եզակի տիկինը՝ Հայոց ցեղասպանությունը որակելով լոկ ողբերգություն:

Թ. ՀԱԿՈՐՅԱՆ
ԱԶԳ օրաթերթ

**ՎՊԿԱՆՆԵՍ ՔԱՋԱԶՆՈՒՄՈՒ ԿՅԱՆՔՆ
ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

(2)

Քաջագունուհի ճարտարապետ

*Յովհաննես Քաջագունու
պայծառ հիշատակին*

Քաջագունուհիների գերդաստանը անցյալ դարի ռուս-թուրքական պատերազմից հետո Էրզրումից տեղափոխվեց Ախալքալակի մարզ: Պապի հայրը՝ Տեր Յովհաննես Իգիթխանյանը, լինելով ուսուցիչ ու քահանա, մեկնեց սբ. Էջմիածին՝ օծվելու: Հայոց կաթողիկոսը ծանոթանալով քահանա ձեռնադրվող բոլոր հավակնորդներին, նրանց առաջարկեց ընտրել նոր անուններ, թվարկելով մոռացության մատնված նշանավոր հայկական տոհմերի անունները: Տեր Յովհաննեսը թարգմանեց իր իսկ ազգանունը, արժանանալով կաթողիկոսի հավանությանը: Իգիթխանյանների հաջորդ սերունդները կրեցին Քաջագունուհի ազգանունը:

Յովհաննես Քաջագունուհին մեծացավ հոգեւորականի ընտանիքում, որը նրան դաստիարակեց իբրև ազնիվ քաղաքացու, հայրենասերի, ազգի նկատմամբ պարտքի զգացումով օժտված անձնավորությամբ:

Յովհաննես (Ռուբեն Իվանի) Քաջագունուհի ճարտարապետը ոչ այլ ոք է, եթե ոչ Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետը: Ժամանակի տարաբախտ ընթացքը նրա անունը մատնեց մոռացության թե՛ որպես քաղաքական գործչի, եւ թե՛ որպես ճարտարապետի: Երկար տարիներ նրա անվան շուրջը լռություն է տիրել: ճարտարապետ-ուսանողների շատ սերունդներ նույնիսկ չէին լսել Քաջագունուհու իբրև ճարտարապետի մասին: Չէ՞ որ նա «Ժողովրդի թշնամին» էր, կիսելով 30-ական թվականների բազմաթիվ առաջադեմ գործիչների ու մտավորականների ճակատագիրը:

Քաջագունուհու անձնավորության, ճարտարապետի, արվեստագետի, գրականագետի մասին քիչ է գրվել: Նրա նկարագիրը լիարժեք կերպով ներկայացնելու համար անհրաժեշտ կլինի համախմբել ինչպես պատմաբանի, այնպես էլ գրականագետի, քաղաքագետի ու ճարտարապետի ուսումնասիրությունները: Նրան մոտիկից ծանոթանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել այն գրական ժառանգությունը՝ քննադատական հոդվածները, պատմվածքները, որոնք նա բեղմնավոր կերպով հրատարակել է Պետերբուրգի, Թիֆլիսի գրական մանուկում դեռևս ուսանողական տարիներից սկսած: Քաջագունուհու «Հարյուր տաս օր Եվրոպայում» ճանապարհորդական նոթերը լիովին համոզում են, որ մենք գործ ունենք վերին աստիճանի խստապահանջ եւ նուրբ ճաշակի, բարձր կուլտուրայի տեր արվեստագետի հետ:

Լինելով բազմակողմանի ընդունակությունների տեր անձնավորություն, նա պատանի տարիներին դժվարացել է նույնիսկ կողմնորոշվել որոշակի մասնագիտության ընտրության խնդրում: Սովորելով Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտում (1887), նա սկզբնական շրջանում վստահ չէր իր ընտրած ուղու մեջ. որոնման մեջ էր՝ ուսումնասիրելով ճարտարապետությունը, միաժամանակ հետաքրքրվել է գրականությամբ: Շեքսպիրը մշտապես նրա ուսումնասիրության առարկան էր: Շեքսպիրին նվիրված նրա հոդվածները

բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում նաև մասնագետների համար: Տարիներ անց, Վանում, Քաջագունուհին քաղաքական եւ կառուցողական գործունեությանը զուգընթաց, դասախոսություններ է կարդացել Շեքսպիրի մասին, զուգահեռաբար ուսումնասիրել ու թարգմանել է քրդական բանահյուսությունը:

Ուսանողական տարիներին Յովհաննես Քաջագունուհին շատ էր նկարում, մասնակցում ցուցահանդեսների¹, իր գիտելիքները խորացնելով արվեստի ու ճարտարապետության պատմության մեջ: Նա լավագույն ուսանողների շարքում էր, մեծ ապագա խոստացող ճարտարապետի համարում ուներ: Ինստիտուտը գերազանց կերպով ավարտելու կապակցությամբ (1895) Քաջագունուհու անունը փորագրվեց ավանդական մարմար տախտակի վրա: Նա իր կենսագրության առաջին էջերը բացեց որպես ճարտարապետ, որպես ճարտարապետ էլ ավարտեց իր կյանքը, դառնալով սովետական դաժան հետապնդումների զոհը, վարձահատույց լինելով իր փառապանծ անցյալի համար: Ունենալով միայն մի նպատակ՝ իր ուժերը նվիրաբերել հայրենիքին, 1925-ին Քաջագունուհին վերադարձավ Հայաստան, հստակ գիտակցելով, թե ինչ է իրեն սպասում:

Այո, Քաջագունուհին ճարտարապետ էր, ընդ որում շատ հետաքրքիր ու յուրատիպ, մեծ հնարավորությունների ու լայն գիտելիքների տեր: Պատահական չէ, որ Ալեքսանդր Թամանյանը ամենատարբեր մասնագիտական հարցերով նրան է դիմել, խնդրելով մասնագիտական եզրակացություններ տալ հանրապետությունում կառուցվող այս կամ այն շենքի վերաբերյալ: Բարեբախտաբար նրա էքսպերտիզաներից մի քանիսը պահպանվել են²:

Եթե Քաջագունուհու գործունեությունը սահմանափակվեր միայն ճարտարապետությամբ, ապա այսօր նա կլիներ բազմաթիվ ճարտարապետական ստեղծագործությունների հեղինակ: Ցավոք, նրա գործերը բազմաթիվ չեն հենց այն պատճառով, որ ճարտարապետի իր կյանքը նա միահյուսեց շատ ավելի մեծ, մեկ ուրիշ կյանքի հետ: ճարտարապետությունը հայրենիքի զոհասեղանին դրվեց: Նույնիսկ աշխատանքի տեղն ընտրելիս, Քաջագունուհին ղեկավարվում էր քաղաքական եւ հասարակական գործի նպատակահարմարությամբ: Մրա մասնագիտական գործունեությունը անցավ Թիֆլիսում, Բաքվում, Երեւանում, Հայաստանի շրջաններում, նաև Վանում վտարանդի եղած ժամանակ (1911): Այնտեղ Քաջագունուհին քաղաքական գործունեությանը զուգընթաց կառուցեց հասարակական շենք: Բաքվում աշխատած տարիներին ճարտարապետը նախագծեց ու կառուցեց Բալախանների շրջանում բնակելի տներ եւ հյուրանոցի շենք (1899-1906):

Քաջագունուհու թվով ոչ այնքան շատ արժեքավոր ժառանգություն են մեր ազգային մշակույթի համար: Գործերը, որոնց մեջ արտացոլվեցին ճարտարապետի աշխարհայացքը, գեղարվեստական մտածելակերպը, բարձր կուլտուրան:

Յովհաննես Քաջագունուհին ճարտարապետական ասպարեզ մուտք գործեց 20-րդ դ. նախաշեմին: Դա մի ժամանակաշրջան էր, երբ աշխարհի կառուցողական արվեստում տեղի էին ունենում ոճական փոփոխություններ, կապված գիտատեխնիկական

հեղաշրջման հետ: Ճարտարապետները որոնումների մեջ էին: Լայն ծավալ ստացավ էկլեկտիզմը: Երբեմն նույն ստեղծագործության մեջ կարելի էր հանդիպել տարբեր ոճերի զուգորդման: Տարածված էր նաև մեկ, որոշակի ոճով շենքի կառուցումը՝ եզրիտակյան, հունական, մավրիտանական, կլասիցիստական եւ այլն: Դրա հետ մեկտեղ, Եվրոպայի ճարտարապետները մերժելով հին ոճերը, փնտրում էին նոր ուղիներ, որոնք խթան կհանդիսանային «տեխնիկայի դարաշրջանի» ճարտարապետության զարգացման համար: Հայ ճարտարապետներն էլ էին ապրում նույն ստեղծագործական մթնոլորտում: Ինչպես մյուս երկրներում, նրանք էլ փորձում էին իրենց ուժերը տարբեր ոճերի մեջ: Այս առումով, միանգամայն հասկանալի է, թե ինչու է ըստ Հովհաննես Քաջազնունու նախագծի կառուցված Թիֆլիսի Մայրամա թողամասում երկհարկանի թեյարանը ուներ պարսկական ոճ: Այդ տարիներին հայ ճարտարապետների ստեղծագործություններում կարելի էր հանդիպել էկլեկտիկական, մոդեռն, նեոկլասիցիստական ոճային ուղղությունների հիանալի ցուցանիշներ: Ցավոք, պատմական իրադարձություններն ու պայմանները չեն նպաստել, որպեսզի նրանց մայրաքաղաքային հիանալի շենքերը կառուցվեին հայրենիքում: Դրանք շքեղացրին Թիֆլիսի, Բաքվի եւ այլ քաղաքների կենտրոնները: 20-րդ դարի սկզբին հայկական ճարտարապետական միտքը աշխատել է ազգային նոր ոճ մշակելու ուղղությամբ: Եվրոպական երկրներում տարածված գտած ազգային ռոմանտիզմը, որն օգտվում էր տեղական գեղարվեստական ավանդույթներից, իր արտացոլումը գտավ նաև հայ ճարտարապետների գործերում, ինչպես Հայաստանում, այնպես էլ այն վայրերում, որտեղ ստեղծագործում էին նրանք: Սրա վկայությունն է Հովհաննես Քաջազնունու ճարտարապետական գործունեությունը մինչև 20-ական թվականները եւ դրանից հետո Երեւանում, Խորհրդային ժամանակաշրջանում: Դեռեւս, ուսանողական տարիներին, երազելով նախագծել հայկական եկեղեցի, նա մեկնում է ուսումնասիրելու միջնադարյան Անին: Նշենք, որ դարասկզբին հայկական ճարտարապետությունը քիչ էր ուսումնասիրված, գրականություն գրեթե չկար: Ինչպես գրում էր ճարտարապետ Նիկողայոս Բունիաթյանը, «հայկական ճարտարապետությունը փակ գիրք էր աշխարհի համար»: Հովհաննես Քաջազնունին կնոջը՝ Սաթենիկին ուղղված նամակներից մեկում գրում է. «Հայկական ճարտարապետությունը վատ է մշակված, գրականությունը շատ աղքատ է, օգտվելու ձեռնարկներ քիչ են ու անկանոն: Այնպես որ ամեն մի ճարտարապետ պետք է իր համար նյութեր հավաքի»: Հովհաննես Քաջազնունին եկեղեցու նախագիծը մշակում է տարիներ շարունակ, փայփայելով հայկական նոր ոճով մոնումենտալ շինություն ստեղծելու գաղափարը: Գիտակցելով հայկական ճարտարապետության կարողությունները, պահպանելով բարձր գեղարվեստականությունն ու արտահայտման ազգային ձեւերը, նա իր առջեւ խնդիր դրեց ճարտարապետությանը տալ նոր բովանդակություն եւ ստեղծել «հայկական նոր ոճ, ինչպես 19-րդ դարի կեսերին ստեղծվեց հայ նոր գրական լեզուն»: Քաջազնունին տարիների իր իղձերն իրականացրեց նախագծելով հայկական եկեղեցի, որը

պետք է կառուցվեր Բաքվի կենտրոնում: Այստեղ այն ժամանակ հիմնականում ապրում էին հայեր, կային նաև ռուսներ ու հրեաներ: Թաթարներն ապրում էին քաղաքի ծայրամասում եւ չէին առնչվում «եվրոպական» քաղաքի բնակչության հետ: Այդ իսկ պատճառով հայկական սրբատեղի ունենալու կարիքը քաղաքում զգացվում էր: Գոյություն ունեցող հայկական եկեղեցին վերափոխումների կարիք ուներ4:

Եկեղեցին կառուցելու համար մեծահարուստ Բուդաղյանը միջոցներ էր կտակել: 1898-ին Պետերբուրգի ճարտարապետների կայսերական ընկերությունը հայտարարեց Բաքվի հայկական եկեղեցու նախագծի առաջին մրցույթը: Մի քանի տարի անց հայտարարվեց երկրորդ մրցույթը: Ներկայացված հինգ նախագծի նոթային նշանաբանն էր՝ «Փառք տեր, Տեր»:

Պետերբուրգում գործող Ժյուրին առավելությունը տվեց ճարտարապետներ Գ. Տեր-Միքելյանի եւ Վ. Պետրովսկու նախագծերին, դրանք արժանացնելով առաջին մրցանակի:

Բուդաղյանի ընտանիքի կտակակատարների Խորհուրդը կտրականապես դեմ էր Ժյուրիի որոշմանը, նախընտրելով Քաջազնունու տարբերակը: Սկսվեց նախագծի աշխատանքային գծագրերի մշակումը, որը Քաջազնունին կատարում էր մենակ, առանց որեւէ մեկին ներգրավելու աշխատանքին: Մրցութային տարբերակով եկեղեցու շինարարության արժեքը ենթադրվում էր 300.000 ռուբլի: Բայց այդ նպատակի համար ժառանգած գումարը կազմում էր 200.000 ռ., այդ պատճառով նախագիծը մշակելիս Քաջազնունին զգալիորեն վերափոխեց այն փոքրացրեց չափերը 1000 մարդու համար, նախագծով նախատեսված 1500 մարդու փոխարեն:

1906-ի սեպտեմբերին, ճարտարապետն իր կնոջն ուղղած նամակում գրում է, որ «Կյուրակի օրը /26-ին - Լ. Դ./ կատարվելու է եկեղեցու հիմքի օժան հանդեսը»: Նախագծային աշխատանքները լրիվ ավարտելուց հետո, 1907-ի օգոստոսի 2-ին սկսեցին սբ. Թադեոս ու սբ. Բարդուղիմեոս առաքյալների, հայկական մայր եկեղեցու կառուցումը: Շինարարական աշխատանքներին անմիջականորեն հետեւելու նպատակով, Քաջազնունին մի ժամանակավոր փայտե տնակ է կառուցում շինհրապարակում, ամբողջ ժամանակն անցկացնելով շինարարության վրա: Քաղաքական կյանքի իրադարձությունները, սակայն, Քաջազնունուն ստիպեցին որոշ ժամանակ հեռանալ Բաքվից: 1908-ին կատարելով դաշնակցություն կուցակցության հանձնարարությունը, նա մեկնեց Կոստանդնուպոլիս: 1909-ին քաղաքական գործունեության համար Քաջազնունին ձերբակալվում է եւ միայն դրամական գրավական վճարելով (10.000ռ.) ազատվում բանտից: 1911թ. նա, խուսափելով դատից, մեկնում է արտասահման եւ իբրեւ քաղաքական վտարանդի ապրում է Ֆրանսիայում, Բելգիայում, որոշ ժամանակ, ինչպես նշեցինք, վանում: Քաջազնունու բացակայության ժամանակ շինարարությանը հետեւում եւ ավարտին է հասցնում ճարտարապետ Ն. Բաեւը, որը 20-ական թվականներին եկավ Երեւան եւ իր ստեղծագործական գործունեությունը շարունակեց այստեղ:

(Շար. 2)

Շուշին ավելին է, քան հաղթանակը

Էջեր ռազմաճակատային օրագրից
(Սկիզբը նախորդ համարներում)

Ջորի Բալայան

Ամբողջ օրը մեզ մոտ՝ հրամանատարական կետ էին այցելում մարդիկ: Հրամանատարներ եւ լրագրողներ, Արցախի պառլամենտի պատգամավորներ ու պաշտոնյաներ: Իմ ծոցատետրում մանրամասնորեն գրված է նրանցից յուրաքանչյուրի նկարագիրը: Օլեգ Եսայան, Գեորգի Պետրոսյան, Արկադի Ղուկասյան, Արմեն Իսագուլով, Վարդգես Բաղիրյան եւ շատ ուրիշներ: Այցելուներից հազվադեպ անձանց հետ էր շփվում Կոմանդոսը, որն ամբողջ գիշերը եւ ամբողջ ցերեկը դուրս չէր եկել խրամատից: Միայն երբ ԼՂՀ նախարարների խորհրդի նախագահ Օլեգ Եսայանն իսկական մոզակախարդի պես խաշլամա պատրաստեց բոլորի համար, Տերնձաղեւոսյանին կարողացանք դուրս բերել խրամատից: Ուրիշ բացառություններ էլ եղան: Մի քանի անգամ հրամանատարական կետ եկան Ռոբերտ Քոչարյանը եւ Սամվել Բաբայանը: Ռոբերտին ես առաջին անգամ էի զինվորական համազգեստով տեսնում: Նրանք երկուսով մեքենայով շրջեցին, կարելի է ասել հրահանգավորեցին բոլոր ուղղությունները: Նրանց խորհուրդներն ու առաջարկությունները, ինչպես Կոմանդոսն էր ասում, անգնահատելի էին: Քանի որ Քոչարյանն ու Բաբայանը, ինչպես ոչ այլ ոք, ոչ միայն տեղանքը գիտեին, մարտական օպերացիայի ամբողջ կենդանի աշխարհագրությունը, այլեւ բոլոր տղաներին, սկսած հրամանատարներից, վերջացրած շարքայիններով, այդ թվում նաեւ ֆիդայիներով: Դեռեւս քարտեզի վրա աշխատելիս Արկադին հաճախ էր նկատել, ինչպես ինքն էր արտահայտվում, Սամվելի շտաբային ունակությունները. նա հաճախ էր վիճում եւ ապացույցներով համոզում իր դիրքորոշման ճշմարտացիությունը: Հետագայում նրան նման գնահատական էին տալիս խորհրդային բանակի բազմափորձ ռազմագետները՝ Քրիստափոր Իվանյանը եւ Անատոլի Ջինեւիչը:

Այլ բացառություններ էլ էին լինում: Հաճախ կապավորներից որեւէ մեկը, գլուխը դուրս հանելով հրամանատարակաշտաբային կապի մեքենայից, գոչում էր. «Կոմանդոս, ձեզ կանչում է վաթսուներկը»: Եվ Արկադին ամեն անգամ խրամատից մինչեւ ՅՇՄՆ ընկած տարածությունը հաղթահարում էր միայն վազքով: «Կանչում է վաթսուներկը»: Դա նշանակում էր՝ Սերժ Սարգսյանը տեղեկություններ ունի, որ գլխավոր հրամանատարին կարող է հաղորդել միայն հատուկ կապի միջոցով, որը գտնվում է ՅՇՄՆում: Ես ուշադրություն էի դարձնում, որ Արկադին ամեն անգամ մեքենայից դուրս էր գալիս գոհ ու շողշողացող դեմքով:

Մայիսի 9-ին Գուրգեն Դալիբալբայանի հետ նրա շատ բան տեսած «Նիվայով», որի վարորդն արդեն հասցրել էր հանել քողարկումը, մեկնեցինք Շուշի: Մեզ հետ էր նաեւ ինքնապաշտպանության շտաբի պետ Ֆելիքս Գոյանը: Բարձրանում ենք օժապար ոլորապատույտներով: Վաղուց չեմ անցել այդ ճանապարհով, որ իր մանրուքներով հանդերձ ծանոթ է ինձ մանկուց: «Ինչի՞ մասին եք մտածում», հարցրի ես հանգիստ Դալիբալբայանին, որի գլուխը ծյան պես ճերմակած էր: «Հրաշքի մասին, և մեղմ ասաց գեներալը եւ ավելացրեց, և ակնհայտի ու

անհավանականի մասին: Միայն տարիներ անց ռազմավարներն իրենց զարմանքը կարտահայտեն, որ համեստ ուժերով, համեստ միջոցներով, բայց հենվելով վիթխարի կամքի ու բարձր ոգու վրա, հայերը հաղթահարեցին անառիկ բերդը: Գրոհով առան անառիկ ամրոցը: Իսկ առայժմ հաղթանակը վերագրելու են հրաշքին»:

Վերջին մեկուկես կիլոմետրը մինչ հյուսիսային կամ ցածի գերեզմանոցը, մենք գնացինք ոտքով, անցնելով ողջ ճանապարհի բացվածքի վրա ցանված կանաչ ականների միջով: Մեծ մասամբ՝ հակատանկային: Ամենուրեք գործի էին անցել ականորդները: Քաղաքում անընդմեջ կրակոցներ էին լսվում. Շուշին ազատողներն էին համազարկ տալիս: Կրակոցները զուգակցվում էին ուժգին ճռինչներով, որ գալիս էին այրվող տներից: Վառվում էին բազմաթիվ զինանոցները՝ մասնավոր տներում, միլիցիայի նկուղներում: Գերի ադրբեջանցիները պատմում էին, որ նախքան քաղաքը թողնելը, հրաման է տրվել հրկիզել այն, որպեսզի բարիքը հայերին չանցնի: Եվ, այնուամենայնիվ, ավելի հաճախ ավտոմատային կրակահերթեր էին լսվում: Ֆելիքսն անսպասելիորեն կանգ առավ ճանապարհի միջին ու ասես ջանալով խլացնել արծազանքն ու փոխկանչերը, բարձրաձայն ասաց. «Այ շան որդիք, ես ձեր ցավը տանեմ: Ախր, այս ի՞նչ եք անում: Հէ՞ որ սա դեռ վերջնական հաղթանակը չէ: Այս ի՞նչ եք անում: Հէ՞ որ այդ փամփուշտները մեզ դեռ պետք են գալու»:

Շուշիի գրավումը ես վերջնական հաղթանակ չէի համարում: Փիլիսոփայական տեսանկյունից, իհարկե, դա ավելին էր, քան միայն հաղթանակը: Շուշին դարձավ ինքնահարգման գործուն փաստարկ: Շուշին, որ հրեշ էր դարձել, չարաղետ կրակակետ, պետք է այրվեր համաձայն բոլոր միջազգային իրավական նորմերի ու կոնվենցիաների, որպեսզի խորհրդանշեր վերջին հրդեհը այդ բազմաշարքային քաղաքում: Երբ 1920 թվականի մարտի 23-ին թուրքերը հրդեհեցին Շուշին եւ բարձր ժայռերից անդունդները նետեցին երեխաներին ու ծերերին, իրենց արարքը համարելով հաղթանակ, պետք է իմանային, որ անարդար «հաղթանակը» միշտ էլ վեր է ածվում պարտության: Որ հաղթանակը, եթե կոչված չէ անհրաժեշտությամբ, հանցագործություն է: Որ նման հաղթանակը հանգեցնում է աղետի: Մահասփյուռ կրակակետերը վաղ թե ուշ իրենք են դառնում թիրախ: Եվ արդարության օրենքով դրանք պետք է մոխիր դառնան: Որովհետեւ միայն մոխիրներից է հառնում փյունիկը:

Մենք քայլում էինք չորսուածածկ փողոցով, որ տանում էր դեպի Ղազանչեցոց տաճար: Մեզ անընդհատ նորանոր երիտասարդներ էին միանում. ոմանք քողարկազգեստով, ոմանք աֆղանկայով, բուշլատով: Ես գրառումներ էի կատարում արդեն ճանապարհին՝ քայլելով. «Հագել են, ինչ ձեռքերն է ընկել՝ սպորտային համազգեստ, նույնիսկ «տրոյկա» կոստյում: Չնայած ցրտին, մի հաղթանդամ մարդ նույնիսկ ամառային «թեմիսկա» էր հագել՝ ցուցադրելով ձմերուկանման բիցեպսները: Բոլորը գնում էին դեպի Ղազանչեցոց»:

Այդ բոլոր տարիներին ես տաճարի մասին մտածում էի, ինչպես հարազատ մարդու մասին: Եվ ահա վերջին ոլորանից հետո նա հառնեց իմ առաջ իր իսկապես ոգեղեն, մարդկային կերպարանքով: Պայթեցված գմբեթ: Երկաթյա արմատուրայի հաստ ձողերը ծառս Գեկտեմբեր, 2002թ. էջ 16

եղած, ցցվել են բոլոր կողմերի վրա: Վիրավոր, անճրեւից ու ձյունից ամբողջապես կապտուկներով ծածկված, ասես արնածոր վերքերով պատված զինվոր լինի: Կանգնած է հպարտ: Ազատվել է երկարատեւ կալանքից: Ազատ օդ է շնչում:

Համբուրելով մուտքի դռան քարը, մտա տաճար ու քարացա: Մինչեւ առաստաղը խնամքով դարսված կանաչ արկղեր են: Յուրաքանչյուրի մեջ՝ Ստեփանակերտի համար նախատեսված պոտենցիալ մահ: Տաճարի կողքին «Գրադի» երկարուկ կանաչ արկղների սար է դիզված: Սկսեցի հաշվել տեղնուտեղը իմ հորինած սխեմայով: Ավելի քան երկու հազար միավոր հրթիռ: Խեղճ Ստեփանակերտ: Այս ամենը պետք է թափվեր իմ քաղաքի գլխին, որտեղ ամեն օր խմբակային (նոր տերմին է) թաղումներ էին կազմակերպվում: Քաղաք, որտեղ ամենադեֆիցիտ ապրանքը դագաղն էր:

Տղաներից մեկը մագլցեց տաճարի կատարը եւ ողջույնի համազարկերի ուղեկցությամբ ամրացրեց եռագույն դրոշը՝ որպես ստիպողական անհրաժեշտությամբ կոչված հաղթանակի շոշափելի խորհրդանշան...

... Իսկ այսօր ստիպողական անհրաժեշտություն է արդեն խաղաղությունը, ավելի ճիշտ, խաղաղության ամրապնդումը: Եվ երբ ԵԱՀԿ երեք մեծ տերությունների ղեկավարները, բոլոր տեսակետներն առանց մինչեւ վերջ քննելու, հենց միայն սպառնում են արագ կարգով թաքուն լուծել Ղարաբաղի խնդիրը, ուզում են նրանց հիշեցնել, որ ստեղծված իրավիճակում պատմական փորձը ցույց է տալիս. դեռ թանաքը համատեղ փաստաթղթի վրա չչորացած, նախկին բետոնապատ հարթակների վրա անմիջապես կաշխատեն նորոգված կրակակետերը: Ու այդ ժամանակ կրկին արյուն կհոսի երկու կողմում էլ: Շուշին ավելին է, քան հաղթանակը ամեն ինչից բացի նաեւ այն պատճառով, որ նա ոչ միայն բացեց Արցախի համար փրկարար «Կյանքի ճանապարհը», ոչ միայն վերացրեց մահաբեր կրակակետերը Ղարաբաղի շուրջ՝ դրանով իսկ խաղաղարար անվտանգության գոտի ստեղծելով երկու ժողովուրդների համար, այլև ռեալ խաղաղության նախակարապետ դարձավ տարածաշրջանում, որտեղ ահա ութ տարի (ժամկետ, որ ինքնին հաշվի է նստում հուսալի խաղաղության գործում արգունների հետ) մայրերը որդիներ չեն թաղում:

Հայ եւ աղբբեջանցի մայրերը:

(Շար. 5 եւ վերջ)
Համառոտ ակնարկ իրանահայ
գաղթօջախների պատմության
Էդ. Բաղդասարյան
(Էդ. Գերմանիկ)

(Շար. Նախորդ համարից)

Իրանահայերն անժխտելի դեր են խաղացել նաեւ երկրի հասարակական-քաղաքական կյանքում: Ի-ի նոր պատմության նշանավոր դեմքերից է հայ ազգի քաղաքական գործիչ Միրզա Մելքոն խանը:

Արտաքին գործերի նախարարությունում կարելուր պաշտոններ են զբաղեցրել նաեւ Հովհաննես խան Մեսեհյանը, Սեթ խան Աստվածատուրը, Ենիկուլփյանները, Հովհաննես խան Ազլալյանը, Դավիթ խան Դավթյանը եւ ուրիշներ:

Իրանահայությունն ակտիվորեն մասնակցել է XX դ. իսկզբին երկրում ծավալված սահմանադրական շարժմանը: 1905-11-ի իրանական հեղափոխության հայտնի գործիչներից էր Եփրեմ խան Դավթյանը: XX դ. իսկզբին ընդունված սահմանադրության համաձայն հայերն իրավունք ունեն ներկայացուցիչներ ունենալ իրանական խորհրդարանում (մեջլիսում): Ներկայումս հս. շրջաններից պատգամավոր է ընտրված Լեւոն Դավթյանը: Ի-ից ժորժիկ Աբրահամյանը:

XX դ. ծերջից Ի-ում իրենց գործունեությունն են ծավալել հայ քաղաքական կուսակցությունների՝ Հայ Դեմոկրատիկական Դաշնակցությունը եւ սոցիալ-դեմոկրատ Հնչակյան կուսակցությունը: ՀՀԴ-ն ակտիվ գործունեություն է ծավալել երկրի հս. արմ. շրջաններում, որոնք հայրուկային շարժման կարելուր հենակետեր էին: Այստեղ են նախապատրաստվել եւ իրականացվել հայրուղային հնագույն հարձակումներից շատերը, այստեղով են Արմ. Հայաստան տեղափոխվել հեղափոխական խմբեր, գրականություն եւ զենք: 1905-ին Կովկասից եկած հայ սոցիալ-դեմոկրատների ջանքերով Թավրիզում ստեղծվել է Սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն: Ի-ի կոմկուսի հիմնադիրներից է տնտեսագետ, պատմաբան Ավետիս Միքայելյանը (Սուլթանզադե):

Իրանահայերը ակտիվորեն մասնակցել են նաեւ Ի-ի ժողովրդական կուսակցության (Թուղե) հիմնադրմանը (Արտաշես Հովհաննիսյան եւ ուրիշներ):

1980-ին սկսված իրանա-իրաքյան հակամարտության առաջին իսկ օրերին Ի-ի հայաշատ վայրերում ստեղծվել են պատերազմին օգնող կոմիտեներ, կազմակերպվել են բուժօգնության դասընթացներ: 1980-ի հոկտեմբերին շուրջ 400 հայ կամավորներ ուղևորվել են զորանոցներ, նրանց մեծ մասը մեկնել է գործող ճակատ: Պատերազմի ընթացքում հարյուրավոր հայ մասնագետներ աշխատել են գործող բանակում: Շոշափելի գումար է կազմել պատերազմի կարիքների համար հայ համայնքի տրամադրած նյութական օգնությանը: Պատերազմում զոհված հայերի թիվը անցնում է 80-ից: 1980-ական թթ. իրանահայ գաղութն ավելի քան 10 հզ. մասնագետներ է ունեցել տնտեսության տարբեր բնագավառներում: Համայնքը հայ երիտասարդությանը տարբեր մասնագիտություններ սովորեցնելու նպատակով ստեղծել էր համապատասխան արհեստանոցներ, որոնք կարճ ժամանակում մեծ ճանաչում են գտել երկրում: Դասընթացներն անվճար էին, տարբեր արհեստանոցներում աշխատող աշակերտները վարձատրվում էին եւ ապահովագրվում: Ի-ում շուրջ 10 ընկերություններ զբաղվում էին կոմբայնի բունկերի արտադրությամբ: Հայերը մեծ ավանդ են ներդրել «Հայ գրուփ», «Վանիկ բունկեր», «Թիոն տանկեր» հաստատությունների աշխատանքներում: Անժխտելի է հայ ժողովրդի մեծ ներդրումը Իրանի արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման, առևտրի ծավալման, արվեստի մշակութային կյանքի բարգավաճման գործում: Ոչ մեծ տոկոս կազմող հայ ձեռնարկատերերի մեծամասնությունը իր կապիտալները ներդրել է մասնաբեռների, զովացուցիչ ջրերի եւ այլ ապրանքների արտադրության մեջ, ինչպես նաեւ քաղաքաշինության բնագավառում: Իրանահայ մանր

ձեռնարկությունների գործունեության համադրումը իրականացվում է «Իրանի հայ արհեստավորների հավաքականություն» ընկերության կողմից, Հայաստանի հետ տնտեսական հարաբերություններ կազմակերպում է «Իրան-Հայաստան Առևտրական Պալատի» միջոցով, որը ղեկավարում է հայտնի ձեռնարկատեր, ազգային բարերար, Իրանի և Հայաստանի առևտրական պալատի նախագահ, Սաթի-Հայաստան միջազգային բեռնափոխադրումների տնօրեն Լեւոն Ահարոնյանը:

1998 թ. Թեհրանում նշված ընկերության ջանքերով կազմակերպվել են իրանահայ արհեստավորների արտադրանքի 4-րդ ցուցահանդեսը, որը տարեց տարի մեծ կարելություն է օժտում: 1995 թ. ապրիլի 18-ին Իրանի Իսլամական Խորհրդարանը վավերացրեց 13 կետերից բաղկացած Իրանի և Հայաստանի պետությունների միջև ճանապարհային միջազգային փոխադրության համաձայնագիրը: Իրանից Հայաստան են առաքվում երկաթ, պողպատ և թեթև արդյունաբերության այլ ապրանքներ: Հայաստանից Իրան են հաստոցներ, քիմիական արտադրանքներ, այլումին և այլ ապրանքներ: Բեռնափոխադրումներին նպաստեց Արաքս գետի վրա Մեղրու շրջանում կառուցված կամուրջը:

Ներկայումս (1999) Ի-ում բնակվում է շուրջ 80 հազար հայ: Համայնքը խիստ շերտավորված է: Կան մեծ թվով արհեստավորներ, արդյունաբերության տարբեր ճյուղերում աշխատող բանվորներ, զգալի թվով մտավորականներ, բժիշկներ, ճարտարապետներ, ուսուցիչներ, պետ. հիմնարկների ծառայողներ և այլն: Մինչև 1979-ի «Իսլամական հեղափոխությունը» զգալի թիվ են կազմել նաև հայ խոշոր ձեռնարկատերերի ու առևտրականները: Հայերի մեծ մասը բնակվում է քաղաքներում Թեհրանում, Թավրիզում, Ռեշտում (Ռաշտ), Ուրմիայում, Սպահանում, Արաքում և Շահինշահրում:

Գործում են ՀԲԸՄ, ՀՕՄ, Հայ մշակութային «Արարատ» կազմակերպությունը, «Հայ կին» միությունը, Իրանահայ Ազգային և Մշակութային միությունը, «Թեհրանի հայ կանանց բարեգործական» միությունը, «Արարատ» և «Հայ երգ» երաժշտական ընկերությունները: Թեհրանի Ազատ Համալսարանի և Սպահանի համալսարանի գրականության Ֆակուլտետին կից գործում են հայագիտական ամբիոններ: Ի-ն սփյուռքի հրատարակչական կենտրոններից է, այստեղ տպագրվում են հայ հեղինակների աշխատություններ, պարբերականներ և այլն:

Հանգուցյալ Արտակ Արք. Մանուկյանը, Կորյուն Արք. Պապյանը, Նշան Ծ. Վարդապետ Թոփուզյանը, վարդապետ Թոսուկյանը, գիտնականներ՝ դոկտ. Ալեքսանդր Բաղդյանը, դոկտ. Կարո Լուկասը, դոկտ. Մկրտիչ Թումանյանը, դոկտ. Ալեհուշ Տերյանը, պրոֆ. Ալեքսանդր Աբեյանը, դոկտ. Հարմիկ Դավթյանը, հայագետներ Լեւոն Մինասյանը, Էդիկ Բաղդասարյանը (Գերմանիկ, նաև համակարգչային գրականության և մասնագիտության ռեկորդակիր Իրանում, «Լույս» երկշաբաթաթերթի և «Ապագա» հանդեսի արտոնատեր և զլխնվոր խմբագիր), հրատարակիչներ Սեպուհ Ամիրխանյանը, Մարդիկ Պողոսյանը, փաստաբան Ալբերթ Բեռնարդին և այլն:

ՀՀ անկախությունից հետո իրանահայ համայնքի և Հայաստանի փոխհարաբերություններն ավելի են սերտացել: Դրան նպաստում են հասարակական-

քաղաքական գործիչների, հոգևոր առաջնորդների, մարզամշակութային կազմակերպությունների և անհատ կատարողների երկկողմ փոխայցելությունները, տնտեսական համագործակցությունը:

ԹեՀԲԱՆՈՒՄ հայերը բնակություն են հաստատել XVlll դ. 2-րդ կեսին: 1768-ին ձեռնարկել են Ս. Թադեոս-Բարդուղիմեոս եկեղեցու 1790-95-ին Ս. Գեւորգ եկեղեցու կառուցումը: 1857-ին Թեհրանում եղել է 110, 1913-14-ին՝ 575 հայ ընտանիք (2905 մարդ): 1959-ին այստեղ բնակվել է 65 հզ., 1978-ին՝ շուրջ 110 հզ. հայ: Ներկայումս (1999) Թեհրանի հայության թիվը կազմում է մոտ 50 հզ: Համայնքի ճնշող մեծամասնությունը արհեստավորներ են (ոսկերիչներ, դերձակներ, հյուսներ, կոշկակարներ), զգալի թիվ են կազմում ձեռնարկատերերը, հիմնարկներում ծառայող պաշտոնյաները, ինչպես նաև բժիշկները, ճարտարապետները, ինժեներները, փաստաբանները, ուսուցիչները: Մինչև 1870-ը՝ բացի վերոհիշյալ երկու եկեղեցիներից, ազգային որևէ հաստատություն կամ կազմակերպություն չի եղել: 1870-ին հիմնվել է «Ուսումնասիրաց միությունը», որը 1871-ին բացել է Հայկազյան միջնակարգ դպրոցը (2 բաժնով, տղաների՝ Դավթյան, և աղջիկների՝ Մարյամյան): 1878-ից սկսել է գործել հայ թատրոնը, 1881-ին հիմնվել է հայ թատերասիրաց ընկերությունը: Ցայս օր Թեհրանում հրատարակվել է 50 անուն պարբերական: 1936-ին իրանական իշխանությունները փակել են բոլոր ազգային, այդ թվում հայկական դպրոցները վերաբացվել են 1942-43-ին): Քաղաքում կա 25 հայկական դպրոց, 3 մանկապարտեզ և 3 մանկանոց: Գործում են Հայ Կին (1939), Արարատ (1944), Հայ Ակումբ (1954), Իրանահայ Գրողների Միություն (1962), Նոր Էջականներ (1969), Հայ Համալսարանականների Միություն, Իրանահայ Ազգային և Մշակութային Միություն (1974), ՐաՖՖի համալիր, Հայ ճարտարապետների միություն, Գործում են նաև «Ավետիսյան» և «Գրիգորյան» բուժարանները և այլ կազմակերպություններն ու միությունները: 1954-ից գործում է ՀԲԸՄ մասնաճյուղը:

Թեհրանում ՀՀ դեսպանատան պաշտոնական բացումը տեղի ունացավ 1992 թ. դեկտ. 22-ին: Եկեղեցիներն են Ս. Թեդեոս-Բարդուղիմեոս (1768), Ս. Գեւորգ (1790-95), Ս. Մինաս (1852), Ս. Աստվածածին (1938-45), Ս. Հովհաննես և Մատուռ (1936), Ս. Թարգմանչաց (1968), Ս. Սարգիս (1964-70), Ս. Ստեփանոս Մատուռ (1974), Ս. Գրիգոր Լուսավորիչ (1982), Ս. Վարդան. Կաթողիկե Ս. Գրիգոր Լուսավորիչ (1950-54), ավետարանական Ս. Հովհաննես (1946), Թեհրանի թեմի ստեղծումը 1944 թ. Ս. Էջմիածնի նախաձեռնությամբ:

Տպարանները Ջավահայ տպարանը (1890), ապա Փարոսը (1901-1963), Մողերն (1922), Վերածնունդ (Բոբոխ, 1933-1953), Իրանչափ (1942-56), Արվան (1943-1952), Ալիք (1950), Մասիս (1955), Անի (1956-80), Արաքս (1955), Նայիրի (1959), Ֆարաբի (1975), Մամուլը (Շավիղ 1894-97): Ներկայումս Ալիք օրաթերթ (1931-ից), Արաքս ամսագիր (1987-ից), Ապագա ամսագիր (1995-1999), Ապագա եռամսյա հանդես (2000-ից), Լույս երկշաբաթաթերթ (2000-ից), մինչ այժմ (2000 թ.) 56 անուն տպագիր և 34 անուն ձեռագիր կամ լուսապատճենավորված մամուլ:

(Շար. 5)

Աշխարհում ինչի՞ համար են սիրում հայերին

Ս. ԻՍԿԱՆՎԱՐՅԱՆ, Գ. ՎԱՏԱՆՅԱՆ

15. Ես միշտ սիրել եմ հայ պոեզիան՝ համարելով այն ամբողջ մարդկության մեծ պոեզիա, սկսած իր հին Էպոսից մինչև մեր ժամանակակիցներից շարերը: Ես երջանիկ եմ, որ ինձ վիճակվեց անձամբ ճանաչել Իսահակյանին՝ մեր դարի մեծ բանաստեղծին, որը հերքեց թվաբանության թեորիան: Նայկական պոեզիան ուժեղ է ոչ թե թվաբանությամբ՝ թե որքան է, ինչքան շար է, այլ նրանով, թե ինչպիսին է: Եվ ահա ոչ բազմաթիվ մի ժողովրդի ներկայացուցիչները վաղուց արդեն մտել են համաշխարհային պոեզիայի մեջ, նրան թարգմանում են բոլոր լեզուներով, նրան սիրում են: Այդ մեծ բան է:

ԻԼՅԱ ԷՐԵՆՔՈՒՐԳ /1891-1967/
Ռուս գրող, հրապարակախոս

16. Մեր նախորդներից ո՞րը, մեր հայրենակիցներից, դասականներից ո՞րը կարող է ավելի ուժեղ կերպով արտահայտել հայրենիքի նկատմամբ իր սերն այնպես, ինչպես արտահայտել է Աբովյանը:

ՊԱՎԼՈ ՏԻՉԻՆԱ /1891-1967/
Ուկրաինացի բանաստեղծ
/Մովեդական Նայասարսն՝ ամսագիր, Երևան, 1984, թիվ 10, էջ 7/

17. Ոչ մի բան ավելի ուսանելի եւ բերկրալի չէ, քան այն, երբ ընկղմվում ես միանգամայն այլազգի մարդկանց հասարակության մեջ, որին հարգում ես, որին համակրում ես, որով օտար լինելով հանդերձ, հպարտանում ես: Նայերի կենսական լիցքը, նրանց կոպիտ քնքշությունը, նրանց աշխարհաբային ազնիվ ոսկորը, նրանց անբացաբերելի զգվանքն ամեն րեսակի մեքաֆիզիկայից եւ հիանալի մտերմությունը իրական առարկաների աշխարհի հետ, այս ամենը ինձ ասում է՝ դու արթուն ես, մի վախենա քո ժամանակից, խորամանկություն մի արա:

Այդ նրանից չէ, արդյոք, որ ես գրելովմ էի իր եռուն գործունեությանը փառաբանված ժողովրդի մեջ, ուր, սակայն, ապրում է ոչ թե կայարանի կամ հիմնարկի, այլ արեւի ժամացույցով, որպիսին ես րեսել եմ քարի փլարակների վրա:

18. Ոչ ճիշտ, այտբեկտիվ դիրքորոշման հետեւանքով ես սովոր էի յուրաքանչյուր հայի մեջ րեսնել բանասերի... Ինչեւէ, դա որոշ չափով ճիշտ է: Ահա մարդիկ որոնք գրնգացնում են լեզվի բանալիները, Նույնիսկ այն ժամանակ, երբ չեն բացում ոչ մի գանձարան:

19. Ես իմ մեջ րեսնում եմ վեցերորդ "արարարյան" զգայարան, լեռան ձգողության զգացումը: Այժմ որտեղ էլ լինեմ, այդ զգացումը արդեն մրահայեցական է եւ կմնա:

ՕՍԻՊ ՄԱՆԳԵԼՇՏԱՄ /1891-1938/
Ռուս բանաստեղծ, արվեստի րեսաբան, թարգմանիչ
/Պրքերի աշխարհ/, Երևան, 1989, թիվ 11/

20. Նայասարանը սիրեցի սկզբում նրա ողբերգական անցյալի համար, իսկ հետո անցյալը խիզախաբար հաղթահարելու համար, ծաղիկների համար, որ քարը ծակում դուրս են գալիս: Ծաղիկներ՝ ոչ միայն ուղղակի իմաստով, գիտության ծաղիկների համար, յուրաքանչյուր հայի վառ երաժշտականության համար, Քուզակի եւ Սայաթ-Նովայի համար, Իսահակյանի եւ

Մարտիրոս Մարյանի համար, Արամ Խաչատրյանի եւ Վիկտոր Նամբարձումյանի համար... Իսկ բոլորից շար սիրում եմ հենց այս հողը, այս դառը, դժվարին, հինավուրց հողը, որի ծալքերից սիրտդ նվաղում է դեռես ինքնաթիռի մեջ:

ՎԵՐԱ ԶՎՅԱԳԻՆՅԵՎԱ /894-1972/
Ռուս բանաստեղծուհի

21. Նայասարանը՝ ինքնապիպ գեղեցկության այդ երկիրը, ճարարարապետական գնայելի հուշարձանների այդ երկիրը, այն ժողովրդի երկիրը, որի դարավոր րառապանքներն անօրինակ են եւ անսահման, իսկ րոկունությունն ու արիությունը սրբահույզ հիացմունքի զգացմունք են հարուցում, - Նայասարանն իրավունք ունի հպարտանալու րառապանքների միջով րարած իր կուրտուրայով, իր սքանչելի պոեզիայով:

22. Նայ ժողովուրդը պարմական դժվարին պայմաններում սրեղծել է աշխարհի ամենափայտուն կուրտուրաներից մեկը:

ՄԱՔՍԻՄ ՌԻՍԿԻ /1895-1964/
Ուկրաինացի բանաստեղծ, հասարակական գիտնական, գործիչ

/Մ. Ռիսկի, Կամուրջներ, Երևան, 1973, էջ 5-6/
23. Մեր դարի ճակարը կրում է մի քանի բանաստեղծների պայծառ անուններ: Անգլիայում Կիպլինգն է, Ֆրանսիայում՝ Ապոլիները եւ Էլյուարը, Գերմանիայում՝ Ռիլկեն, Իսպանիայում՝ Գարսիա Լորկան, Ռուսաստանում՝ Մայակովսկին ու Եսենինը, Նայասարանում՝ Չարենցն ու Իսահակյանը: Ամեն անգամ, երբ այդ լուսարուներից մեկն ու մեկը մարում է, թվում է, թե մութը պարում է աշխարհը: Սակայն այն ամենը, ինչ նրանք թողել են իրենցից հետո, սրվեր չի եղել, այլ հողին:

ԼՈՒԻՍ ԱՐԱԳՈՆ / ծնվել է 1897/
Ֆրանսիացի գրող եւ քաղաքական գործիչ
/Պրական թերթ/, Երևան, 1975, 30 հոկտեմբերի /

24. Աննկուն ժողովուրդ է, խիստ, ինչպես խիստ է հողագործին չենթարկվող հողը: Այստեղ հողագործի կյանքի անբաժանելի մասն է թվում քարի հետ հավիտենական, անվերջանալի պայքարը՝ փորել, հանել այն վարելահողի դաշտը ընդլայնելու համար, թե նրա ներսում փորել բնակարեղ, խուց, կամար: Ամեն ինչ այստեղ ամուր է: Նույնիսկ խաղողը կրճարում է արամիներ րակ, ամեն մի խաղողահարիկ հարկ է լինում արամներով կրծել, ինչպես կոճիկը, ամեն մի հայ հակառակվում է օտարերկրացու կամքին, յուրաքանչյուր խաղաղ եկեղեցի, հենց նրան մոքենում ես, դառնում է ամրոցի պարեր՝ անհաղթահարելի հասարությանը, նեղ հրակնարներով եւ հրակնարների ցանցի երեսում աննկուն մարտիկներ:

25. Նագար րարի ապրել են այդպես, քարակուրակը մանրարելով, վարելահող դարձնելով, մերկ քարերի վրա աճցնելով դրախարային այգիներ, բոտրագոյն վարդեր եւ պողաբեր խաղողի այգիներ, րանելով պարերագմի արհավիրքները, եւ հենց որ առկայծում էր խաղաղությունը, անհամբեր վերադառնում են բրիչով ոքնարակ արված հողին:

Նայասարանի պարմությունը ասք է անդյուրամշակ հողի վրա հագարանյա համառ խաղաղ աշխարանքի, դաշտերի վերածված քարերի՝ քանի որ քարը դարձել է բերքարու ծառ, ջլապինդ վագ, բոտրագոյն վարդ:

Նոր տարի

Հունվարի 1-ին տարին սկսելու եւ Նոր տարվա սկզբի տոն նշելու սովորույթը հայոց մեջ ընդհանրացել է համեմատաբար ոչ վաղ անցյալում: Մինչեւ մեր հարյուրամյակի սկիզբը Նավասարդը նշող շրջաններում հունվարի 1-ին Նոր տարին նշելը սահմանափակվում էր ընդամենը միայն շնորհավորելով: Արեւտահայոց շրջանում, Կիլիկիայի տարածքի հայերի մեջ, մասամբ՝ արեւելահայ որոշ ազգագավառներում եւ հայկական մի շարք գաղթօջախներում 19-րդ դ. Նոր տարին նշվում էր հունվարի 1-ին եւ բավական կայունացած արարողակարգ ուներ: Չնայած ընդհանուր առմամբ այդ արարողակարգը ընդհանուր դրսեւորումներ չատ ուներ, սակայն կային նաեւ որոշ տարբերություններ: Նախ՝ որոշ բազմազանություն ունեին տոնի անունները: Հիշվում են Ամանոր, Տարեմուտ, Տարին Գլուխ, Նոր տարի, Կաղանդ, Կաղինդ, Կալոնտար ձեւերը, Նոր տարուն նախորդող գիշերն էլ հայտնի էր Լույսի գիշեր, Խլվիկ, Կախ կամ Կաղ անուններով, իսկ համշենահայերի մոտ՝ Ծաղկըմուտ:

Նոր տարվա համահայկական սովորություններից կարելի է առանձնացնել, առաջին հերթին, նախորդ օրն ու գիշերը 10-12 տարեկան տղաների խմբերի շրջայցերը եւ տոնը շնորհավորելու ավանդույթը: Սովորաբար շնորհավորում էին երգելով: Երգերի տեքստերը պարունակում էին բարեմաղթություններ, ընտանիքի անդամների գովք եւ տոնական ճաշատեսակների խնդրանք: Մինչ տներում զբաղված էին տոնական պատրաստություններով, տղաները երգելով տուն էին մտնում կամ երդիկից դատարկ տոպրակ իջեցնելով՝ ավետում հին տարվա ավարտը, Նոր տարվա գալուստը: Չնայած բովանդակային մեծ ընդհանրությանը, այդ երգերը շատ էին տարբերվում: Նախ դրանցից յուրաքանչյուրը կատարվում էր տեղական բարբառով, երգերում հիշատակվող ուտելիքների թվարկումից, ըստ էության, կարելի է պատկերացնել տվյալ տեղանքի Նոր տարվա անհրաժեշտ մթերքների առարկայական ցանկը, ապահով, բարեկեցիկ կյանքի վերաբերյալ տեղական պատկերացումներ եւ այլն: Բերենք մի քանի օրինակ.

Կըտեր հողը խնգան փոշի
Ծոցը վրեն ծալած ոսկի,
Դուռը վրեն փերթ ըրեքնակ,
Կտեր վրան բոլոր լիսնակ,
Տան սները կերոններ,
Ոսկե կամար գերաններ:
Բարի ռիգիուն ալելուկիա,
Աշեն, հաշեն, էս տունը՝ շեն,
Մին ու գերան՝ սողումաշեն,
Տուն ավլողներ՝ ջուխտ աղունակ,
Ձեռնավելը՝ փունջ մանուշակ,
Թորոնները խորաննի են,
Հացթուխները՝ խանում խաթուն,
Էս տանը կա երկու լիզու,
Մինը՝ բարի, մինը՝ չարի,
Չարինը՝ ընդի, բարինը՝ ըստի,
Բարին վեր գա, ձեզ հետ նստի,
Բարով թող գա ձեր նոր տարի,
Մուրագներուդ չիմ կատարի,
Ձեր տուն մտնու հազար բարի,
Աճար ցորեն, կորեկ, գարի,
Լիքը հորեր շատ ունենաք,

Կարմիր օրեր շատ ունենաք,
Կարմիր օրով, կարմիր շորով,
Ուրախ կենաք միշտ կուշտ փորով: (Լոռի)
Շնորհավոր նոր տարի,
Ծեր տունը շեն իլի,
Պարով նոր հաքներ,
միշտ ուրախ իլեք:
Հացը բու իլի,
Աչքը կուշտ իլի,
Ծեզ էլ փայ իլի,
Մեզ էլ փայ իլի:
Նոր տարին ուրախ,
Ուտենք գոգինադ,
Չամիչ, թաթարու,
Ունենք ստանալու:
Ախ եկավ Նոր տարի,
Հետը բերավ նոր բարի,
Մանր տղոց ուրախ օր,
Բարի գավակ հոր ու մոր:
Մանր տղայք են ուրախ,
Ունեն կաղին, գոգինադ,
Սալորի չիր, չամիչ, թուզ,
Փշատ, ունապ եւ ընկույզ:
Մանր տղայք, չնոռնաք,
Աշխարհունս չեք մեճակ,
Որիշ շատ խեղճ տղայք կան,
Աղքատ եւ անօգնական:
Եմիշ ու գինի,
Միշտ էլ բուլ իլի,
Միշտ ուրախ ապրենք,
Մե լավ քեփ քաշենք:
Տունը շեն իլի,
Բարաքայք իլի,
Միշտ ջոմարդ իլեք
Մեզ էլ միշտ հիշեք:
Շնորհավոր Նոր տարի (Ղալար):

Ալելուկիա, ալելուկիա,
Հինը գնաց, նորը կու գա,
Հինը ուրախ ճանապարհեք,
Նորի համար պատրաստեցեք,
Դուռ, լուսամուտ բացեք,
Ինչ որ կամիք խնդրեցեք,
Թե կյանք, թե խելք, թե մալ,
Ամենքիդ մուրազն ալ
Կու տա, միամիտ եղեք:
Աղաներ ու խաթուններ,
Ձեզ նորհավոր Նոր տարի,
Ապրիք շատ ու շատ տարի:
Ասոր Կախ է, վաղն է Կաղանդ,
Կախանն յո՞ր է, վաղն է Կաղանդ, ալելա,
Շարոց, բաստեղ, չիր ու հեվեք,
Գոգնոց բացեք, գոգով տվեք, ալելա:
Տուն ու երդիք լիք են շարքով,
Բարով կաղանդ, բարկարեվով, ալելա,
Երկու մամուն ճըմուռ, քաղցու,
Չոջիկ պապուն բաղարջ, բլիթ, ալելա:
Ժիժ-պիժերուս շարան-շարան,
Շարոց, բաստեղ, անոյշ կաթա, ալելա:
Գոգնոց բացեք, գոգով տվեք,
Ափով բաժնենք, ծափով ուտենք, ալելա:
Լոյս է իջեր վեր գերեզմընին,
Ողորմիս ձեր լոյս մեռելին, ալելա:
Գոգնոց բացեք. գոգով տվեք,
Ափով բաժնենք, ծափով վայլենք, ալելա:

(Կիլիկիա)

Գալանտոս, տոս, տոս,
Ամեն տարի բարե հասնինք,
Շնորհավոր Նոր տարի,
Նոր յանկային տուն տարի,
Շալի շապիկ հագուցի,
Քերմե գոտի կապեցի,
Չայով-փունջով հարգեցի:
Գալանտոս, տոս, տոս,
Գալանտոսը եկիլ է,
Դուռին տակը կայմիլ է,
Շիլա շապիկ հագիլ է,
Կարմիր գոտի կապիլ է,
Մեկ ավունճին խայիլ է:

(Նոր Նախիջևան)

Շնորհավոր տոն ու տարին,
Նոր Կաղանդն եւ յուր բարին,
Պատ վեր խըման, խիմ վեր քարին,
Վեն քարն ի Պողոս Պետրոս
Բանլիս տվեց փրկիչ Հիսուս:
Տունը շեն, շեն շինական,
Յուղն ու բլիթ նստան, կերան,
Բասիլիոս անուն բարի,
Որ ազատեց խեն քրիստոնեն,
Տարին են տարին, օրն են օրեն:
Ձեր տունը շեն հետ արելուն,

Արեւն էրկներ ձեր տղեքներուն,
Չարը գատաներ, բարին մոտենար:
Օղորմի աղին, ծառ տընկողին,
Լեզկա ռես Բաղտոյին,
Գրգիր Խաչոյին, տան ճեռչին:
Ուտենք, խմենք անոյշ գինին,
Ասենք օղորմին, ողջութեն հայոց ազգին:

(Վան, ըստ երեւոյթին Լեզք գյուղում)

Ավետիս, ավետիս, ավետիս,
Հա յ, եկել է, եկել է,
Ով եկել է, գայլն եկել է,
Կարմիր կովեն յուղ կուզե,
Կուտուզ հավեն հավկիթ կուզե,
Ավետիս, ավետիս, ավետիս,
Ավետիս, ավետիս, ավետիս,
Յուղեն կռե, մեղրեն կռե, տանտիկին,
Սերեն բռնե, մեղրեն կռե, տանտիկին,
Քիչ մ ալ յուղ հետո՞ բերես տանտիկին,
Սախըն մատրդ ալ հետ չկռես, տանտիկին,
Ավետիս, ավետիս, ավետիս:
(Բաբերդ)

Աս օր Կաղ է, վաղը Կաղըբտ,
Ձեր մեռելին հոգուն տվեք ուր գա,
Տանտիկին, տանտիկին,
Էլի գնա մարագն ի վար,
Կարճ բռնե, երկան կըյե,
Կամացուկ ուր մատիկդ չկըյես:
Ով ուր տա՝ շեն կենա,
Ով ուր չիտա՝ հավուն տոտոզը չորնա:
(Կիրասոն):

Տանտիկինը կախված տոպրակի մեջ դնում էր մրգեր, հատուկ այդ նպատակով թխված խմորեղեն, ընդեղեն, չամիչ եւ այլն:

Նոր տարվա գլխավոր նախապատրաստություններն ուտելիքների շուրջն էին: Աշնանային սկսած այս տոնի համար պահած ունենում էին զանազան չորացրած մրգեր (սալորի, ծիրանի, խնձորի, թզի չիր), թարմ մրգեր (տանձ, խնձոր, սերկեիլ, նուռ, խաղող), պաստեղներ, ընկուզերշիկներ եւ այլն: Պետք է հիշել, որ հունվարի 1-ը, ընկնելով հայոց ծննդյան տոնի շաբաթի մեջ, պաս օր էր, եւ ամանորյա ուտելիքները բաղկացած էին պասին թույլատրելի ուտելիքներից: Դեկտեմբերի 30-31 տանտիկինները ջանասիրաբար մաքրում էին լոբին, սիսեռը, ոսպը, բրինձը, ձավարեղենը, որոնք տարբեր կերակրատեսակների ձեռով պիտի զարդարեն տոնական սեղանը: Տարբեր տեղերում այդ ճաշատեսակները տարբեր էին, բայց շատերը ջանում էին դրանց թիվը հասցնել յոթի: Ահա, օրինակ, ականատեսի նկարագրությունը Բալուխ ամանորյա ճաշատեսակների վերաբերյալ («ա») Պղլուր (ձավար), աղընձած ու ծեծված եւ խյուսի վերածված շուշմա (սուսամ), քիչ մը ծեծված մանր կարմիր պղպեղ, բավական շատկեկ ջարդված սոխ, իրարու հետ խառնելով, կը լեցնեն զանոնք մինչեւ կեսը կամ քիչ մը ավելի ջուրով լեցուն պուտուկի մեջ, որուն կափարիչը վրան դնելով ամոր բոլորտիքը կը ծեփեն խմորով ու կը դնեն թոնիրին մեջ որ եփի, ատոր կսեն Խորու: ք) Պղլուրով ու անոր երեք անգամ սիսեռով գրեթե թոփիկի հար եւ նման գնդիկ կը շինեն: գ) Անուշապուր, որուն նյութերն են ծեծված ցորեն, որ մաքրված է իր թեփերեն, ընկույզ, նուշ, չամիչ, մեղր կամ ռուպ, երբեմն գազպե ալ կը դրնեն, երբ գայն

ունենան: ե) Փերփեր-ապուր, ասոր ալ նյութերը կը բաղկանան չորցված փերփերե, ծեծված ցորենե, կարմիր լոպիկե (լուբիայի տեսակ մը), աղացված ոսպ, չոր, բայց քիչ պղպեղե, սոխե եւ շուշմայի յուղե: գ) Պահոց քեշկեկ, աս՝ կը բաղկանա ծեծված ցորենե, ոսպե, սիսեռե՝ չորցված կանկարե, ավելուկ ըսված չոր բանջարե եւ շուշմայի յուղե: է) Շուշմայի հետ ասիկա զուտ ցորենի ալյուրի շաղված խմոր մըն է զոր կը բանան խիստ բարակ ու կը տապկեն շուշմայի յուղին մեջ ու հետո անոնց ամեն մեկուն երկու երեսներուն վրա կը լեցնեն կամ կը քսեն ռուպով կամ մեղրով շուշմային խյուսին հետ խառնուրդը, եւ կը շարեն դրանք իրարու վրա, որպեսզի կակուղ մնան եւ թե ավելի անուշման իրար ծծելով: Պետք է գիտնալ, թե այս բոլոր կերակուրները պահոց կերակուրներ են»:

Շատ ընդունված էին ոսպից, սիսեռից սարքած քոյոֆթան, ոսպից, սիսեռից, լոբուց, ձավարեղենից ձեթով սարքած տոլման («սուտ տոլմա»), Բալուխ կերակրատեսակների մեջ հիշատակված Անուշապուրի տեսակները, որ շատ տեղերում «Մայրամապուր» (Մարիամի ապուր) էր կոչվում, ինչպես, օրինակ, ծեծած կորկոտով, չամիչով, չոր ծիրանով ու սալորով եփված մայրամապուրը, որի մեջ եփելուց հետո դոշաք են դնում:

Շատ մեծ նշանակություն էր տրվում մրգերին: Չոր մրգերից գատ տոնական մթերքների տեսականին հարստացնում էին խնձորը, տանձը, մինչեւ նոր տարի թարմ պահած խաղողը, սերկեիլը եւ այլն: Չոր ու թարմ մրգերի չամիչի ու ընդեղենների հետ կազմում են ամանորյա ընթրիքի հիմնական բաղադրիչները: Ահա թե ինչպես են նկարագրում ականատեսները Դիարբեքիի հայերի Նոր տարվա մրգեղենի սեղանը. «*«պրկիշը» (պղնձյա կլոր սեղան) տաքուկ թոնիրին վրա դրված կըլլա, լեցուն՝ քաղցրեղեններով, նպարեղեններով, բանդակներով եւ այլն* որոնց նշանավորներն են ընկուզերշիկը, մշերշիկը, փստուղերշիկը: Անդեղտան տպակիի նման պաստեղը, նուռը, սերկեիլը, արմավը * սեխը, մեղրապուրը: Նաեւ պտուտակը, ունապը, փշատը եւ այլն: Փոքր սեղանի մի վրա դրված է * նշանավոր անուշեն հավվաները՝ ընկույզե, նուշե, շուշմայե, որոնց բույրը եւ համը աննկարագրելի է *»: «Տանտիկինը ցորեկին կպատրաստե «մեզեին պրկիշը»: Սեղանին վրա կը շարե նուրբ պնակներ՝ ամեն տեսակ մեզեղեններով լի՝ շաքարեղեններ, նուշ, լեպլեպի, կուտեր, մարինջ, խնձոր, նուռ եւ այլն: Իրիկունը, արևել մար ամսեղեն վեջը, տան մեծավորը կը բազմի թոնիրին ճակատը, շուրջը ունենալով ընտանիքին մյուս անդամները: Հիմակ այս պրկիշը կը բերեն, կը դնեն թոնիրին վրա. սեղանի երկու կողմը կը վառվին խոշոր մոմերը, որոնք միշտ զույգ ըլլալու են, կարմիր ու ճերմակ օղիի շիշերն ալ կը շարվին սեղանին շուրջը: Բուրրովին գիշեր ըլլալուն պես * ընթրիքեն վերջ կը վերցվի մեզեի սեղանը, թոնիրի վրան կը մաքրվի, փոքրիկ մանչերն ու աղջիկները կ'ելլեն կը նստին թոնիրին վրա՝ անհամբեր սպասելով «Լօլե»-ին, որ ատա կը բերվի, - մեծ պրկիշ մը դարձյալ, լեցուն հետետյալ կարգով՝ կարմիր չամիչ, սեւ չամիչ, ընկույզ, նուշ, լեպլեպի, արմավ, թուզ, սիճուզ, բոլորը իրարու վրա լեցված, որոնց ամենուն վրա կը կենան քանի մի ծալ պաստեղ: Մանուկները կը սկսին երկու ձեռքով խառնել արդեն այս խառնուրդը, որուն կըսեն «լօլենխառնել»: Լօլեն տակավին կատարյալ չէ

մանկան համար, մինչև որ չբերվի «չաթալ մոմը». ասիկա հաստ արմատ ունեցող եւ արմատեն քանի մը նախշուն ճյուղեր արծակող, հատկապես Լօլեին համար պատրաստված մոմ մըն է: Երեք «չաթալեն» սկսյալ՝ մինչև քառասուն «չաթալները» կան: Ավանդություն մը կա, թե ընտանիքը քանի անդամն որ կը բաղկանա՝ այնչափ պետք է որ վառված ըլլան մոմի ճյուղերը»:

Նոր տարվա սիրված անուշեղեններից էին նաև աղանձը՝ որպես կանոն չամիչի, մաքրած ընկույզի, նուշի ու բոված կանեփի, երբեմն՝ բոված սիսեռի հետ խառնած, ինչպես նաև Նոր նախիջեւանում «Կաղանդ» կոչվող անուշը: Վերջինիս սպիտակելու աստիճան հարած մեղրի եւ կեղեկից մաքրած ու բոված ընկույզի միջուկի խառնուրդն է:

Դեկտեմբերի 31-ի տոնական նախապատրաստությունների առանցքը, սակայն, կազմում էին բազմաթիվ խմորեղենները: Նախ՝ ամենուր այդ օրը հաց էին թխում, եթե նույնիսկ մեծ քանակությամբ հաց ունենային. Նոր տարին պետք է նոր հացով սկսել: Ապա թխվում էր տոնի կարեւորագույն, «Տարի հաց», «Կրկենի», «Դովլաթ կրկենի», «Կլոճ» եւ այլ անուններով հայտնի ծիսական հացը: Տարբեր տեղերում այդ հացի բաղադրամասերը, ձեւը տարբեր էր: ՏԱՐԻՆ կարող էր լինել գաթա, բաղարջ, ձվածեւ, կլոր եւ այլն: Գլխավորն այն է, որ ՏԱՐԻ հացի մեջ որեւէ նշան էր դրվում՝ կորիզ կամ լոբի, ավելի հաճախ՝ դրամ: Տարբեր տեղերում ՏԱՐԻՆ տարբեր օր են կտրում՝ տարեմտի ընթրիքին, հունվարի 1-ի առավոտյան, հունվարի 4-ին, հունվարի 5-ին՝ ճրագալուծին, հունվարի 6-ին ծննդին: ՏԱՐԻՆ կտրում էին տան բոլոր անդամների թվին հավասար, հաճած բաժին հանելով նար տան կենդանիներին, արտին, հանդին * Ում բաժնի միջից դուրս գար այդ նշանը, այդ տարի նա երջանիկ կլիներ կամ ընտանիքի հաջողությունը նրանից կգար: Ծիսական հացի միջի նշանը նշանի տերը պահում էր ողջ տարին: ՏԱՐԻՆ գարդարում էին ընկույզով, չամիչով, զանազան գարդանախշերով: «* Կաթան է Կաղանդի փառքն ու փայլը, - գրում է դարասկզբի հեղինակը, - Կաթայի խմորն, եթե օրն է ուտիք, զի Աստվածահայտնության ու Ջատկին եւս կաթա շինելու սովորություն կա, կաթով կը շաղվի, իսկ եթե պահքի օր է, որպես Կաղանդինը, մեղրով կը շաղվի եւ կըսվի խորիս կամ խորիսխ: Կաթայի երեսին վրա կը նկարվին տեսակ տեսակ կենդանիներու ձեւեր եւ շատ անգամ տաճարներու նկարներ: Կաթայի ձեւն է կլորակ, երբեմն խաչածեւ, ձվածեւ, եռանկյունի կամ քառակուսի: Ունի փոսիկներ, որոնց մեջ երեխեք, մանկիկ տղեկներ ցորենի հատիկներ դնելով, կը պարեն եւ հետո տանիքներու վրա դես ու դեն ձգելով կսպասեն, որ թռչնիկներ գան, կտցեն եւ ուտեն*»: Իսկ ահա Ջավախքի հայերի մեջ, Նոր տարվա արշալույսը բացվելու հետ, տատիկները «ՏԱՐԻՆ» դնում են սալայի մեջ, վրան մեղր ածում, դուրս գալիս տնից, դառնում դեպի արեւելք եւ երեք անգամ ասում. «Դովլաթ, սարն էս, ձորն էս, արի տուն»: Ապա տուն են մտնում, վրայի մեղրը բոլորին բաժանում, որպեսզի տարին անուշությունով անց կացնեն, իսկ «ՏԱՐԻՆ» պահում՝ հունվարի 4-ին կտրելու համար:

«ՏԱՐԻ» հացից բացի թխում էին զանազան ձեւերի ու մեծության այլ խմորեղեններ, որոնք ունեին կանխատեսելու նպատակ, ինչպես նաև հմայական խմորեղեններ: Վերջիններից էին, օրինակ, կլոր, մեջը

ծակ, ցորենով ու գարիով գարդարված «հացի հոր» «գարու հոր» կոչվող խմորեղենները: Գյուղերում թխում էին եզան պտուկներ, արոր, գութան, խնոցի, քաղաքներում՝ ընտանիքի եկամուտը խորհրդանշող աշխատանքային գործիքի պատկերով խմորեղեն, ինչպես՝ մկրատ, մատնոց, ուրագ, քսակ եւ այլն: Շատ տեղերում թխում էին նաև մարդակերպ ու կենդանակերպ թխածքներ՝ ընտանիքի անդամների թվի համեմատ, եւ տան կենդանիների տեսակներից՝ մեկական (եզան, կովի, ոչխարի եւ այլն): Թխվելու ընթացքում դրանց ուռչելը կամ սմբելը համապատասխանաբար դրական կամ բացասական գուշակություն էր տվյալ տարվա համար: Դրանից զատ, կենդանիների, թռչունների անունով թխված խմորեղենները տրվում էին նրանց, ինչպես ստորեւ կտեսնենք, Նոր տարվա նոր, հոսող ջրում օժելուց հետո:

Առհասարակ Նոր տարվա խմորեղենները բոլորն էլ ծիսական էին, ունեին հատուկ խորհուրդ: Բացի վերոհիշյալներից, որոնց գործածությանը կծանոթանանք ստորեւ, հիշենք, որ թիֆլիսահայերը սովորություն ունեին, ի թիվս տոնական այլ, թխել նար երկու հաց, որոնցից մեկը կոչվում էր «Էգ», մյուսը՝ «Չիք»: Էգը ողջ տարին պահում էին այլուրի մեջ, որպեսզի այլուրը առատանար, «Չիքը» զցում էին հոսող ջուրը, որ չարիքը, «չկան» անցնող ջրի նման չքանան: Սեբաստիայում Նոր տարուն թխում էին «Կայծակի հաց», վստահ, որ այն ուտելուց հետո կայծակնահար չէին լինի: Նույն Սեբաստիայում Ամանորյա հացիկներից պահում էին մինչև գարուն եւ, եթե գարունը չորային էր լինում, երեք անգամ թրջելով կտոր-կտոր թափում էին որեւէ այրու երդիկից, որպեսզի անձրեւ գար: Բութանիայում, Պոլսում այդ օրվա խմորեղեններից պահում էին մինչև Տյառնընդառաջ, այդ օրը չորացած հացը կտրում եւ ուտում էին՝ որպես ատամնացավ կանխող միջոց:

Նոր տարվա տոնական խնջույքը սկսվում էր դեկտեմբերի 31-ի ընթրիքով: Որպես կանոն, այդ օրը այցելություններ չէին լինում, սակայն ընթրիքին ընտանիքի բոլոր անդամների ներկայությունը պարտադիր էր: Տան ավագագույն անդամը բարձրացնում էր առաջին բաժակը, օրհնում սեղանը, շնորհավորում տնեցիների եւ ընտանիքի Նոր տարին եւ առաջարկում բոլորին՝ առաջին բաժակի հետ մեղր համտեսել, -«Անուշ մեղր ուտենք, որ տարին բոլոր անուշ գրուցենք, անուշ լսենք, անուշ վարվենք»: Որոշ տեղերում ընթրիքն սկսելուց առաջ տան գլխավորը երեք բուռ կաղին, ընկույզ էր նետում դեպի տանիք «Շեն կենա Կալանտար, բարով Կալանտար ըլլա» խոսքերով, վստահ, որ նետված այդ կաղին-ընկույզը առաջիկա տարվա առատությունը պիտի ապահովի: Ընթրիքին հաջորդում էր աղանդների ճաշակումը, որ, ինչպես տեսանք, բաղկացած էր թարմ ու չոր մրգերից, խմորեղեններից, ընդեղեններից *

Կեսգիշերին երիտասարդները գնում էին թարմ, Նոր տարվա սկզբի հետ նորոգված ջուր բերելու: Առհասարակ այդ ժամին ջրին հատուկ գորություն էր վերագրվում: Որոշ տեղեր համոզված էին, որ ուղիղ կեսգիշերին, երբ հին տարին տեղը գիջում է նորին, գետի ջուրը մի պահ ոսկի է հոսում, ուրիշները վստահ էին, որ այդ պահին հոսող ջուրը իր հետ կարող է տանել-չքացնել դողերոցով հիվանդի ցավը: Չմեռվա այդ սառնամանիքին հիվանդներ կային, որ մերկանում էին եւ մի ակնթարթով մտնում գուռից հոսող ջրի տակ:

Սակայն գլխավորն այն է, որ փոքր տարբերություններով շատ տեղերում շնորհավորում էին ջրի Նոր տարին՝ հոսող ջրի մեջ հատուկ թխված հացիկներ, ցորեն-գորու հատիկներ զցելով, եւ միաժամանակ, մյուս խնորեղեններից, ինչպէս նախ մի խուրձ խոտ թրջելով նորոգված ջրով՝ ջանում քաղել նրա զորությունը: Ջրի մեջ հատիկներ, հացիկներ զցելով՝ սովորաբար ասում էին.

Առ քեզի գարի,
Տուր մեզի բարի,
Առ քեզի քյոմուր (ածուխ),
Տուր մեզի Էօմյուր (կյանք),
Առ քեզի հատիկ,
Տուր մեզի Ջատիկ:

տաղերնակ
Առ գարի
տուր բարի
առ երկաթ,
տուր դովաթ:

տաղերնակ
Առ քեզի գարի,
տուր հնձի հազա
բարի:

-Քեզի կուտամ ցորեն, գարի,
Դուս Ի հնձի տու բարի,
Շնորհավոր Նոր տարի:

-Ջրին բարին, ջրին մորին,
Անդնդային թագավորին,
Ջուր կաղնդե՞ր ես:

Ջրի տակ թռչած հացի մի քանի կտոր որոշ տեղեր ամբարի մեջ պահում էին մինչեւ տարվա վերջ, որ հացը առատ լիներ: Տան կենդանիների, երկրագործական գործիքների եւ այլ այս կարգի պատկերներով թխված հացիկները, ջրում թրջելուց հետո, ուտեցնում էին կենդանիներին, «հացի հոր» կոչվող կլոր, ծակ թխվածքը կախում տան պատից: Որպես կանոն ուտեցնելու-հյուրասիրելու այդ պահը ուղեկցվում էր բարենաղթություններով: Օրինակ, Շապին Կարահիսարում թռչուններին Նոր տարվա առաջին կերը տալիս երգում էին՝

-ճու, ճու, ճու, ձագուկներ, իմ սիրելի վառելիքներ,
Մոտ եկեք տամ ձեզ հատիկ, որ տաք ինձի շատ հավկիթ,

ճու, ճու, ճու, ճու, թռչնիկներ, կարմիր, ճերմակ հավուկներ,

Եկեք կաղնտեմ ձեզ ալ, տամ ձեզ հատիկ, ջուր գուլալ:
Նույն ձեւով գոմում, անասուններին կերակրելիս.

-Եկեք, սիրուն բուշիկներ (հորթեր), սիրամ (մուգ կարմիր) ու կարմիր գույներով,

Ձեզի ալ տամ հատիկ, կեր, որ կաղնդչեք եմ բերեր:
Դուք ալ ապրիք տարիներ, ձեր սիրական զավակով,

Համբուրեմ ձեր ճակատներ, սյուսլի-վ պուռմա կոտոշներ:

Ավելորդ է ասել, որ տան ջրի բոլոր անոթները լցնում էին նորոգ ջրով:

Ջրից ու հացից զատ, սակայն, նորոգվում էր նաեւ կրակը: Դեռեւս դարեակզբին օջախն էր տաքացնում տունը, օջախի վրա էին կերակուր պատրաստում: Օջախն առհասարակ տան սրբազան անկյուններից էր, եւ նրա հետ կապված բազմաթիվ ավանդական սովորություններ ապահովում էին օջախի բարոյական ու առարկայական անձեռնմխելիությունը: Բայց Նոր տարվա օջախն առանձնահատուկ էր, երբ նորոգվում էր կրակը, իսկ շատ տեղերում մի մեծ քոթուկ էին դնում օջախի մեջ՝ աստիճանաբար առաջ մղելու պայմանով այնպես, որ մինչեւ ծնունդ կրակը անմար մնար: Բոլոր դեպքերում անմար էր պահվում Նոր տարվա գիշերվա եւ հաջորդ օրվա, հունվարի 1-ի օջախը: Տնեցիներից ով էլ այդ օրը տուն մտներ, թեկուզ օրվա ընթացքում մի քանի անգամ, անպայման հետը թեկուզ մի փայտ էր ներս բերում եւ դնում օջախը՝ մի տեսակ շնորհավորելով տոնի առթիվ: Օջախի կրակի պայծառությունը գուշակում էր ընտանիքի կյանքի պայծառություն ու ջերմություն տարվա ընթացքում:

Բազմապիսի գուշակություններն առհասարակ Նոր տարվա տոնի անբաժան, բնորոշ մասն էին կազմում:

Օրինակ Ջավախքում նոր տարուն տնից առաջին անգամ դուրս գալիս հայրը գոմ էր մտնում տնեցիների ուղեկցությամբ, ձին քաշում գոմի մեջտեղը, եւ բուրն անհամբեր սպասում էին, թե ձին ինքնուրույն ո՞ր ոտքը առաջինը կբարձրացնի: Աջը բարձրացնելը մեծ բարեբախտություն էր գուշակում, ձախը՝ ծախորդություն: Նույն Ջավախքում հունվարի 1-ն առհասարակ «բախտ- փորձուկ» էր: Երիտասարդ տղաներն ու աղջիկները նախորդ օրը թխված «ղառղռի կլիկները»՝ կլոր, փոքրեկիկ հացիկները դնում էին կտուրներին կամ դեզերի վրա եւ հետեւում, թե դրանք կտցող ազաւները ո՞ր կողմը կթռչեն. այդ կողմից էլ սպասվում էր հարսնացուն կամ փեսացուն: Այլ վայրերում գիշերը, երբ տնեցիները նստում էին մոմի լույսի ներքո եւ մոմի լույսից պատերին գծագրվում էին ստվերները, այդ ստվերների ձեւերով, լուսավորության ու դժգունության աստիճանով գուշակում էին դրանց տիրոջ լուսավոր կամ մութ, անորոշ ապագան տվյալ տարվա համար: Աղջիկներն էլ ձուն մաքուր լվանում էին, մի թասի մեջ ճերակ ձվի կողքին դնում էին ածուխ ու հինա եւ գիշերը թողնում թոնրի շրթին: Եթե առավոտյան ձուն կարմրած լիներ, անշուշտ, այն դնող աղջիկն այդ տարի կարմիր բախտի կարժանանար, սեւանալու դեպքում՝ սեւ, նույնիսկ՝ կմահանար:

Մխիթար Գոշ (12-դ.)

2.Մորենին եւ Վազը

Ո՞ր պահելով վազի դէմ, մորենին ասաց.

-Քեզ նման կը բարձրանամ եւ կրկնակի պտուղ կը տամ եւ կը գերազանցեմ քեզ, որովհետեւ ձմռանը անթառամ եմ լինում:

Վազը հակաճառեց նրան.

-Քո պարծանքը կատարեալ կը լինի, երբ աշնանը հաւաքես հնձանում:

Իսկ աշնանը մորենին ստնատակ եղաւ:

3.Նռնենին եւ Թզենին

Նռնենին եւ թզենին կամեցան սիրով կապել միմեանց հետ ու երդւեցին քաղցրութեամբ, բայց նռնենու թւութեան պատճառով ձանձրացաւ թզենին, եւ նրանց դաշինքը խախտեց:

Առակիս իմաստն այն է, որ սիրողները նախ պէտք է փորձեն միմեանց բարքերը, թէ բոլոր կողմերով նմա՞ն են իրար, իսկ եթէ ոչ՝ հեշտութեամբ կը խախտուի սէրը:

4.Դեղծը եւ Սերկելիլը

Ատեանում մէկ անգամ դեղծը հանդիմանել սկսեց սերկելիլին, ասելով:

-Տեսքով դեղին ես ու մարդկանց համար դժարութեալի: Իսկ ես բարետես եմ ու դիւրաճաշակ:

Եւ նա ասում է.

-Կեղծաւոր ես ամենեւին եւ մարդկանց խաբող, ճաջելիս քաղցր ես երեւում, բայց մտնելով որովայն, շատ վնասներ ես գործում: Իսկ ես դեղին եմ, քանի որ տեսակցութեան գնալով եւ հիւանդութիւնը վերացնելով, ցաւակից եմ դառնում հիւանդներին, եւ ոչ թէ քեզ պէս մերժւած եմ նրանցից:

Պարզ է միտքը առակիս, կեղծաւորները միշտ ճշմարիտներին հանդիմանում են իրբերս վարքով

կոպիտների, եւ ներկայացնում իրենց քաղցրաբարոյ եւ վշտակից: Սակայն ճշմարիտ խօսքերը մարդկանց դեղ են, թէւ առաջին հայացքից հակառակ են երեւում եւ ցաւակցելով նրանց՝ վերացնում են հիւանդութիւնները:

5. Անմիտ Սարդն ու Հունապի Ծառը

Մի անմիտ մարդ հունապի ծառը դժնիկ կարծելով՝ հատեց արմատից: Ծառը զայրանալով ասաց.

-Ո՛վ անագորոյն, ծառը պտղից պէտք է ճանաչել եւ ոչ թէ տեսքից:

Առակս վերաբերում է անմիտ դատողներին՝ թագաւորներին, իշխաններին, դատաւորներին եւ եկեղեցու առաջնորդներին, հանդիմանելով, որ անւարժ են դատում, որով եւ բազում վնաս են գործում, բարուն իբրեւ չարի խոշտանգելով:

ՐԱՅԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

- Ամեն բանի վերջն է գովելի:
- Ամեն բարեւ տվող բարեկամ չէ:
- Ամեն մարդ կրակն իր ձվածեղի տակն է քաշում:
- Ամեն մարդու շապիկը իր մարմնին մոտ է:
- Ամեն շուն իր դռանն է հաչում:
- Ամեն փայտ շերտի չի լինի, ամեն սար՝ Մասիս:
- Ամեն փորձանք մի խրատ է, ոչ փորձանքը կվերջանա, ոչ խրատը:
- Այծին պոզեր չեղան, ասաց՝ այս տարվա ուլն են:
- Այծն այծի համար լավ է, քան մի հոտ ոչխարը:
- Այսօրվա մի կանխիկը վաղվա երկու ապառիկից լավ է:

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԱՌԱՃՆԵՐ

- Ազնավն ուզեց կաքավի նման քայլել, իր քայլքն էլ մոռացավ:
- Աղքատությունն անոթ չէ, բայց բարիք էլ չէ:
- Ամեն դարպաս կարող ես փակել, բայց մարդկային բերանները փակել չես կարող:
- Ամեն ընկույզ կլոր է, բայց ամեն կլոր բան ընկույզ չէ:
- Ամեն մարդ իր արշիճով է ուրիշին չափում:
- Ամեն մարդ իր ցավի մասին է մտածում, քոսան էլ՝ մորուք ունենալու:
- Ամեն վայրէջքին վերելքն է հաջորդում:
- Ամեն փայլող բան ոսկի չէ:
- Ամուսնուն կախելու են տանում, կինն ասում է՝ վերադարձիդ ինձ համար ծաղկավոր շոր կբերես:
- Այծ մի մեռիր, գարուն կգա, խոտ կբուսնի:
- Այն ձեռքը, որ չես կարող կտրել՝ համբուրիր:
- Այնպես արա, որ ոչ շամփուրն այրվի, ոչ խորովածը:
- Այնպես էլ է լինում, որ մկան բունը հազար մանեթ է դառնում:
- Այնքան խոսեցի, որ լեզվիս վրա մազ բուսնավ:
- Այսպես որ փքվես, վախենամ որ վրջը պայթես:
- Այստեղից քշեցին, այնտեղ էլ չընդունեցին:
- Այսօրվա գործը վաղվան մի թողնի:
- Աշխատասեր մարդուն աստված էլ է սիրում:
- Աշխարհը երբեք նույն վիճակի մեջ չի մնում:
- Աչքը տեսավ, սիրտն ուզեց:

Ժամանց

1- Ուրախ անկյուն

Ջոն, դու նորի՞ց բանտախցում ես:

-Այո, դժբախտութիւն ունեցայ, գտնել ինչ-որ պարոնի դրամապանը:

-Բայց չէ՞ որ դա հանցագործութիւնն է:

-Այո, բայց ես դրամապանակը գտայ աւելի շուտ, քան նա կորցրել էր:

Ոստիկանը դժարութեամբ գետնից բարձրացնում է կռի մէջ տուժած հարարբեցողին:

-Դուք կարող էք բնութագրել ձեզ հարւածող անձնաւորութեանը, հարցնում է նա:

-Ես հէնց դրանով էի զբաղւած այդ պահին, երբ նա յարձակւեց ինձ վրայ:

Բանակում.

-Լսէք, խնդրում եմ արագացրէք եւ որոշէք դուք փող էք զգում բանկ, թէ վերցնում:

-Դէ իհարկէ վերցնում եմ, գրողը տանի: Որտեղ եմ ես խցկել ատրճանակը:

Դատաւորը.

-Եւ այսպէս դատապարտեալը ձեզ անւանել է հիմար: Դա ճշմարտութի՞ւն է:

-Այո՛:

-Այդ դէպքում ինչի՞ց էք դուք բողոքում:

Դատաւորը դատապարտային.

-Յոյսով եմ մենք այլեւս չենք հանդիպի:

-Իսկ ինչ է, դուք թոշակի է՞ք գնում:

Գիշերով մութ փողոցում անծանոթը աղերսգին խնդրում է անցորդին:

-Եթէ դուք հէնց հիմա ինձ երկու հարիւր դոլար տաք, կը փրկէք մի հարգարժան մարդու կեանք:

-Եթէ դուք ձեզ նկատի ունեք, չարաչար սխալւում էք, դուք նման էք թափառականի:

-Ես ձեզ նկատի ունեմ:

2- Արդեօք գիտե՞ք

Որպէսզի խնձորը խաշելիս ցալքուն չտայ եւ չկպչի տապակից (թաւա), հարկաւոր է խնձորը մի քանի տեղից ծակծկել եւ տապակի մէջ լցնել մի քիչ ջուր:

Թարմ լաւ է պահում, եթէ նրան լցնում են փայտի չոր եւ մաքուր թեփի մէջ:

Եթէ կոմպոտի բանկայում պտուղները բարձրանում են դէպի վերեւ, իսկ նրգահայթը մնում է տակը ժ, ապա անհրաժեշտ է բանկան նորից մանրէագրծել (ստերիլիզացի), ընդ որում աւելի երկար ժամանակ, քան առաջին անգամ:

3. ԱՆՆԵՆՈՒԿՆԵՐ

1. ԾՈՎԱՓԻՆ

Սեւ ծովի ափին, գեղատեսիլ մի ծովածոցում գտնւում է երեխաների համար սիրասուն կուրորտային մի քաղաք: Այդ քաղաքի պիոներական ճամբարում հանգստանում են հազարաւոր երեխաներ: Երեխաներին գրաւում է ծովափի որ խոր հատակում գորգի նման փռւած մանր ու մաքուր աւազը եւ ծովի փոքր կոհակները: Վաղ առաւօտից

Առողջապահական

ԱՌԱԿԵԼ ՏԱՐԱԾԻԱԾ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԲՈՒԺՈՒՄԸ ԴԵՂԱԲՈՅՍԵՐՈՎ

ԽՐՈՆԻԿԱԿԱՆ ԳԱՍՏՐԻՏ

Մի շարք արտաքին եւ ներքին գործոններ կարող են հանգեցնել այս հիւանդութեան առաջացումը:

Արտաքին գործոններն են՝ ոչ ճիշտ կենսաձեւը, դիետայի եւ ռեժիմի խախտումները, ալկոհոլի եւ միկոտինի չարաշահումը, մասնագիտական վնասները:

Ներքին գործոններն են՝ ցերեղային եւ հորմոնալ խանգարումները, տեղային ախտահարումները՝ կապած քիմիական թունավոր գործոնների ազդեցութեան հետ, որոնք քայքայում են լորձաթաղանթը: Հիւանդութիւնը կարող է լինել՝ ինքնուրոյն կամ ուղեկցել այլ հիւանդութիւնների (ստամոքսի խոց, խլէցիստիտներ, դեղնախտ, ալիտամիոզոս եւ այլն):

Հիւանդութիւնն ունի սրացման եւ յարաբերական լաւացման շրջաններ:

Գատատրիտներն առաջանում են ստամոքսափութի բարձր կամ ցածր թթւայնութեան ֆոնի վրայ: Այս հանգամանքը սկզբունքային նշանակութիւն ունի բուժումը կազմակերպելիս:

Հիւանդութեան ախտանիշներն են՝ ծանրութեան կամ ցաւի զգացողութեան սրտի գոլալի շրջանում, ախորժակի վատացումը, գիտոցը, այրոցի զգացումը, երբեմն էլ սրտխառնոցը փսխումը:

Հիւանդութեան բարդութիւններին են համարում յետագայում խոցային հիւանդութեան եւ ստամոքսի չարորակ ուռուցքի առաջացումը: Սովորաբար նախաուռուցքային վիճակ է համարում ցածր թթւայնութեամբ ուղեկցող գատատրիտները, իսկ բարձր թթւայնութեամբ ընթացողը սպառնում է խոցային հիւանդութեան առաջացմանը եւ համարում է նախախոցային վիճակ:

Բուժումը: Կարեւոր աշանակութիւն ունի դիետայի պահպանումը: Պէտք է ուտել օրական 4-5 անգամ եւ սննդի մէջ ընդգրկել. կաթնաշոռ, խաչած միս, ձկան ոչ իւղոտ տեսակներ, բանջարեղէնային խիւսեր, մասուրի հիւթ, պաքսիմաթ, շիլաներ:

Լ.Դեղաբոյսերի բուժական հաւաքներ, որոնք կիրառւում են ցածր հիւթազատութեամբ ընթացող գատատրիտների դէպքում.

1. Եզան լեզու (տերեւներ) 10 գ Օշինդր դառը (վերգետնեայ մաս) 10 գ Անանուխ (վերգետնեայ մաս) 10 գ Երիցուկ դեղատնային (ծաղիկներ) 10 գ Սրոհունդ (վերգետնեայ մաս) 10 գ Խնկեղէգ եղէգնային (արմատներ) 10 գ Եղեսպակ դեղատու (վերգետնեայ մաս) 10 գ Խատուտիկ դեղատու (վերգետնեայ մաս) 10 գ Արալիս մանջուրական (արմատներ) 10 գ Պատրաստել ջրաթուրմ եւ խմել 1/3 - 1/2 բաժակ, ուտելուց 30 րոպէ առաջ, օրական 3 անգամ:

2. Ռազիանա սովորական (պտուղներ) 25 գ

ծովում լողացող եւ ծովափի աւազների հետ խաղացող երեխաների հաճելի աղմուկը չի դադարում մինչեւ երեկո:

Դուք ուզո՞ւմ էք իմանալ, թէ այդ ո՞ր քաղաքն է: դժար չէ գուշակել: Եթէ հողաբուսական մի գոտու (որով հարուստ է ԱՅրիկան) վերջին տառը հանեք, կստանաք այդ քաղաքի անունը: Գտեք, ո՞ր քաղաքն է:

2.Ո՞Վ ԵՄ ԵՍ

Ես երիտասարդ չեմ, հարիւր հազարաւոր տարիներ է, ինչ հուսում եմ փշատերեւ անտառների ու տունդրայի միջով դէպի հիւսիս՝ Սառուցեալ ովկիանոս: Մօտ հազար կիլոմետր է իմ երկարութիւնը, իսկ ստեղծած դելտաս հինգ հազար քառակուսի կիլոմետրից աւել է: Իմ լայնութիւնը տեղ- տեղ հասնում է 6-10 կիլոմետրի: Բաւականին մէծ գետ եմ, չէ՞: Իմ մասին քիչ են խօսում: Դէ, ի՞նչ խօսեն. ձմռանն այնքան եմ մրսում, որ 8-9 ամիս մնում եմ սպիտակ վերմակի տակ, եւ մարդիկ մռռանում են ինձ:

Ուզում է՞ք իմանալ իմ անունը: Ես այդ ձեզ ասի: Չեզ օգնելու համար կասեմ միայն, որ իմ անունը գրոււմ է չորս տառով (ռուսերեն երեք): Եթէ իմ անուն վերջին «ա» տառը տեղափոխեք առաջ, կստացւի երիտասարդ մի նաւահանգստի անուն, որը գտնոււմ է ինձնից ոչ հեռու, արեւելքում, մի մէծ ծովի ափին:

Ասացեք, ո՞ր գետն եմ եւ այն ո՞ր նաւահանգիստ է, որի մասին խօսեցի:

3.Ո՞ր Ժամին

Գիտարշափ մասնակիցներից մէկը աշխատանքային ընկերոջը հրաւիրում է իր մօտ սուրճ խմելու:

-Ե՞րբ գամ,- հարցնում է ընկերը:

Չեզ կարող եմ ընդունել միայն վաղ առաւօտեան:

Այսինքն կեսօրին, իմ սիրած ժամին:

Այո, ձեր սիրած ժամին՝ երեկոյեան, լուսաբացին:

Այո, այո, դա հարմար ժամանակ է:

Տարօրինակ խօսակցութիւն: Ընկերների համար եւ՝ երեկոն, եւ՝ առաւօտը, եւ՝ կեսօրն ու կեսգիշերը միեւնոյն ժամն են:

Այո, երկրագնդի վրայ մի տեղ կայ, որտեղ այդ մտացածին բանը իրողութիւն է:

Այդ որտե՞ղ է:

4. ԱՄԵՆԱ...

Ո՞րն է. երկրագնդի ամենացուրտ ծովը, ամենաթափանցիկ ծովը, ամենախոր խովը, ամենամեծ ծովը:

• Պատասխաններ

1-Ծովափին- Անապա քաղաքն է:

2-Ո՞վ եմ ես- Չորս տառով գրող Արեւելեան Սիբիրի Յանա գետն է, որ հոսում է տաեգայի ու տունդրայի միջով դէպի Սառուցեալ ովկիանոս: Եթէ նրա վերջին «Ա» տառը փոխադրենք առաջ, կստացւի՝ «Այան», որը նաւահանգիստ է օխտի ծովի ափին:

3. Ո՞ր ժամին- Բեւեռներում:

4. Ամենա...- Երկրագնդի ամենացուրտ ծովը Անտարկտիդային Ռուսաս եւ Ուելելա ծովերն են, որոնց ջրերի ջերմաստիճանը երկար ժամանակ 0c-ից շատ ցածր է լինում:

Ամենաթափանցիկ ծովը Սիջերկրականի արեւելեան մասն է, որի տեսանելիութիւնը հասնում է 60 մետրի:

Ամենախորը Մարիանեան իջւածքն է, որի խորութիւնը հասնում է 11022 մետրի (1967 թ. տւեալներով):

Ամենամեծ ծովը Կորալականն է, որի մակերեսը հաւասար է 4 մլն. 791 հազ. քառ. կմ:

Տուղտ դեղատու (արմատ) 25 գերիցուկ դեղատնային (ծաղիկներ) 25 գ Մատուտակ (արմատ) 25գ
Պատրաստել եփուկ, 1/2 - 2/3 բաժակ, օրական 3 անգամ, ուտելուց 30 րոպե առաջ:

II. Դեղաբոյսերի հալաքներ, որոնք օգտագործում են բարձր թթվայնությամբ ընթացող գաստրիտների դեպքում:

1. Եզան լեզու (տերեւներ) 40գ Սրոհունդ (վերգետնեայ մաս) 40 գ Աննեռուկ (վերգետնեայ մաս) 40 գ Գետնալեղի (վերգետնեայ մաս) 20 գ Մանդիկ ծոային (վերգետնեայ մաս) 20 գ Հազարատերեւուկ (վերգետնեայ մաս) 15 գ Անանուխ (տերեւներ) 10 գ Քեմոն սովորական (պտուղներ) 10 գ Խնկեղեգ (կոճղարմատ) 10 գ Պատրաստել եփուկ, օգտագործել կեսական բաժակ, օրական չորս անգամ, ուտելուց 1 ժամ յետոյ:

2. Լորենի (ծաղիկներ) 20 գ Կտաւատ (սերմեր) 20 գ Մատուտակ (արմատ) 20 գ Խնկեղեգ (կոճղարմատ) 20 գ Անանուխ (տերեւներ) 20 գ Ռազիանա (պտուղներ) 20 գ Խառնուրդից մէկ ճաշի գդալ թրմել մէկ բաժակ եռման ջրում: Քամել, խմել օրական 2-3 բաժակի չափով:

3. Ծիծեռնախոտ (վերգետնեայ մաս) 10 գ Հազարատերեւուկ (վերգետնեայ մաս) 20 գ Գերիցուկ դեղատնային (ծաղիկներ) 20 գ Սրոհունդ վերգետնեայ մաս) 20 գ Պատրաստել եւ օգտագործել այնպէս, ինչպէս նախորդը:

III. Վատ ախորժակի դեպքում խորհուրդ է տրուում հետեւեալ հալաքների օգտագործումը.

1. Օշինդր դառը (վերգետնեայ մաս) 40 գ Հազարատերեւուկ (արմատ) 20 գ Խատուտիկ դեղատու (արմատ) 20 գ Պատրաստել ջրաթուրմ, խմել մէկ ճաշի գդալ, ուտելուց 15-20 րոպե առաջ:

2. Օշինդր դառը (վերգետնեայ մաս) 50 գ Ջրառույտ (տերեւներ) 50 գ Պատրաստել ջրաթուրմ, օգտագործել մէկ ճաշի գդալ, ուտելուց 15-20 րոպե առաջ:

3. Օշինդր դառը (վերգետնեայ մաս) 25 գ Ջրառույտ (տերեւներ) 25 գ Գետնալեղի (վերգետնեայ մաս) 25 գ Խատուտիկ դեղատու (արմատ) 25 գ

Խմել պատրաստած ջրաթուրմից մէկ ճաշի գդալ, ուտելուց 15-20 առաջ:

IV. Եթէ նկատուում է լուծի նկատմամբ հակում, կարելի է կիրառել հատեւեալ բուժման հալաքները.

1. Երիցուկ դեղատնային (ծաղիկներ) 10 գ
Հազարատերեւուկ (վերգետնեայ մաս) 10 գ
Օշինդր դառը (վերգետնեայ մաս) 10 գ
Եղեսպակ (տերեւներ) 10 գ

Պատրաստել ջրաթուրմ խմել 1-2 բաժակ, օրական 2 անգամ, տաք վիճակում, ուտելուց 20-30 րոպե առաջ:

2. Օշինդր դառը (վերգետնեայ մաս) 10 գ
Չիաձէտ դաշտային (վերգետնեայ մաս) 20 գ
Հազարատերեւուկ (վերգետնեայ մաս) 20 գ
Եօթնտերեւուկ (կոճղարմատ) 10 գ

Պատրաստել եփուկ, 2 թէի գդալ հումքը մէկ բաժակ ջրում թրմելով: Խմել օրական 1-2 բաժակ:

V. Փորկապութեան դեպքում.

1. րոհունդ (վերգետնեայ մաս) 10 գ
Ջրառույտ (տերեւներ) 10 գ
Կատախոտ (արմատ) 10 գ
Խնկեղեգ (կոճղարմատ) 10 գ
Պատրաստել եփուկ, օգտագործել կեսական բաժակ, օրական 3 անգամ, ուտելուց 1.5 ժամ առաջ:

2. Թանթրենի սեւ (ծաղիկներ) 50 գ
Դժնիկ լուծողական (պտուղներ) 50 գ
Խմել պատրաստած ջրաթուրմից մէկ բաժակ, օրական 2 անգամ, առաւօտեան եւ երեկոյեան:

VI. Ստամոքսի շրջանում ծանրութեան եւ ցաւի զգացման դեպքում օգտակար է հետեւեալ հալաքը.
Կատախոտ (արմատ) 10 գ
Ռազիանա (պտուղներ) 10 գ
Անանուխ (տերեւներ) 20 գ
Երիցուկ (ծաղիկներ) 60 գ
Պատրաստել ջրաթուրմ 2 թէի գդալ հումքը մէկ բաժակ եռման ջրում թրմել: Խմել 1-2 փաժակ անհրաժեշտութեան դեպքում:

VII. Ցաւերի եւ աղէփքութեան դեպքում.
Անանուխ (պտուղներ) 10 գ
Ռազիանա (պտուղներ) 10 գ
Քեմոն (պտուղներ) 10 գ
Անանուխ (տերեւներ) 20 գ
Պատրաստել ջրաթուրմ, խմել օրական մէկ բաժակ, կում-կում:

VIII. Եթէ կայ աղէփոխութիւն եւ որովայնի փքւածութիւն, բայց փորկապութիւն չկայ, օգտակար են հետեւեալ բուժական հալաքները.

1. Սրոհունդ (վերգետնեայ մաս) 30 գ
Ջրառույտ (տերեւներ) 20 գ
Անանուխ (տերեւներ) 15 գ
Հազարատերեւուկ (վերգետնեայ մաս) 15 գ
Սամիթ (սերմեր) 15 գ
Պատրաստել ջրաթուրմ, խմել 1/4 բաժակ, օրական 4-6 անգամ, ուտելուց 1-1.5 ժամ յետոյ:

2. Երիցուկ դեղատնային (ծաղիկներ) 50 գ
Կատախոտ դեղատու (արմատ) 40 գ
Քեմոն սովորական (պտուղներ) 10 գ
Պատրաստել ջրաթուրմ եւ խմել կեսական բաժակ, առաւօտեան եւ երեկոյեան:

3. Երիցուկ դեղատնային (ծաղիկներ) 50 գ
Քեմոն սովորական (պտուղներ) 25 գ
Խնկածաղիկ սովորական (վերգետնեայ մաս) 25 գ

Պատրաստել ջրաթուրմ, խմել 1/3 բաժակ, օրական մի քանի անգամ:

Վաղուց ի վեր յայտնի է ցածր հիւթազատութեամբ ընթացող գաստրիտների բուժումը կեչու սնկով: Մէկ ճաշի գդալ փոշիացւած սունկը լցնել մէկ բաժակ տաք ջրի մէջ (40-50 աստիճանից ոչ բարձր) եւ թրմել 6 ժամ: Անբողջ թուրմը խմել կում-կում, ուտելուց կէս ժամ առաջ, օրական 3 անգամ: Բուժման տեսողութիւնը 5-6 ամիս է:

Ստամոքսի, ենթաստամոքսային գեղձի եւ աղիների հիւթազատութիւնը կանոնաւորելու նպատակով ժողովրդական բժշկութեան մէջ ընդունւած է սննդի օրաբաժնի սխտորի եւ սոխի ոչ մեծ քանակ: